poems about his orphan childhood and was moved by them. Yet I could  
never imagine that this was not the stand-alone story of an orphan, but  
was rather a history of thousands. We are now comfortably seated in  
Gyumri Techno Park, a modern building fully equipped with everything  
necessary for flying in the net of dreams. This is our time machine  
and we follow our pilot, Ms. Karine Alexanyan, a local historian, to  
Alexandropol a century ago. “In October 1915, the number of refugees  
in Alexandropol province was 22,815, of which 6,844 were in the city of  
Alexandropol. Of these, 10,000 were children,” reads a text projected on  
the wall. Then our journey takes us to the newly-established First Arme-

nian Republic, and we learn that it could not address the refugee crises  
and called for external support. Then I am in Paris, it is April 28, 1919, a  
rainy day, and I sit there silently while the representative of the Amer-  
ican Relief Administration, Herbert Hoover, signs an agreement with  
Poghos Nubar Pasha, the representative of the Armenian Delegation  
in Paris, and Avetis Aharonyan, the representative of the Republic of  
Armenia. They aim to prevent hunger and starvation in Turkish Armenia  
and the Republic of Armenia. I get déjà vu, as if I'm listening to recent  
news about Syria... They agree that Amercom (American Committee)  
will assist refugees and the local population below the poverty line,  
will help the government collect refugees and establish orphanages,  
establish mobile health care centres, create workshops and education,  
etc. etc. Then we are in Alexandropol again and the Refugee Committee  
of Alexandropol is dissolved and the food provision for the refugees  
is taken over by Amercom. We wake up in an orphan city, sheltering  
around 50,000 refugees. Half of the city's population are orphans. I

կումիտեն) կաջակցի փախստականներին և տեղի ծայրահեղ աղքատ բնակչությանը, կոզմի կառավարությանը հավաքել գաղթականներին և որբանոցներ կառուցել, հիմնել շրջիկ հիվանդանոցներ, արհեստանոցներ, կրթություն կազմակերպել և այլն, և այլն... Այնուհետև մենք կրկին Ալեքսանդրապոլում ենք. Ալեքսանդրապոլի Փախստականների հանձնախումբը լուծարված է, և փախստականների համար սննդի մատակարարումը փոխանցվել է Ամերկոմին: Մենք արթնանում ենք որբերի քաղաքում, որը պատսպարել է շուրջ 50,000 գաղթական: Քաղաքի բնակչության կեսը որբեր են: Ես քայլում եմ 1920-ականների Ալեքսանդրապոլի փողոցներով, որտեղ համաճարակն ամեն օր հարյուրավոր երեխաների կյանք է խլում: Սայլերը մոտենում են որբանոցների դռներին ամեն օր, և որբերը իրենց ընկերների դիակները դնում են դրանց վրա: Այնքան շատ են զանգվածային գերեզմանները, դրանց հաշիվ չկա:

Նույն օրն ավելի ուշ ես շարունակում եմ ճամփորդությունս դեպի անցյալ այս անգամ Նարինե Խաչատրյանի հետ, որը պատմում է իր տատի՝ Շիրազի քրոջ պատմությունը: 1920-ականներին ամերիկացիները սկսեցին որբերին տեղափոխել Ալեքսանդրապոլից ԱՄՆ: Շատերը դա ընդունում էին որպես բարեգործություն, հազարների համար փրկության ուղի: Մինչդեռ երբ հետ ենք գնում ժամանակում, լսում ենք, թե ինչպես է լաց լինում մի երեխա, քանի որ իր ընկերներին որդեգրում են ամերիկյան ընտանիքները: Նա շատ տխուր է, որ կորցնում է ընկերներին:

Իսկ իրեն ինչու՞ չորդեգրեցին:

Նա շարունակում է լաց լինել: «Ես տգեղ եմ, դրա համար էլ ինձ ոչ ոք չի որդեգրում»: Ինքս իմ աչքին փոքրանում եմ, երբ տիկին Նարինեն նկարագրում է «գեղեցկության» այն չափանիշները, որոնցով ընտրում էին Միացյալ Նահանգներ ուղարկվող երեխաներին: Համաձայն դրանց՝ «գեղեցիկ» նշանակում էր, որ բույս մատի հաստությունը պիտի դաստակի կեսը լիներ, իսկ պարանոցինը՝ իրանի կեսը: Դրան գումարած այն, որ երեխայի հասակը պիտի լիներ 60-70 սանտիմետր:

Ուշ երեկոյան վերադառնում եմ հյուրանոցի սենյակ: Սկսում եմ համացանցում փնտրել նյութեր Ալեքսանդրապոլի որբանոցների կյանքի մասին: Անգլերեն և հայերեն

miş ve mültecilere gıda dağıtımı Amercom tarafından üstlenilmiş. Bir yetimler kentinde uyanıyoruz, 50.000 mülteci barınıyor burada. Şehrin yarisi yetim. 1920'lerin Alexandropol sokaklarını dolaşıyorum, her gün yüzlerce çocuk bulaşıcı hastalıklardan ölüyor. El arabaları dolaşiyor her sabah yetimhaneden yetimhaneye ve yetimler, ölmüş arkadaşlarının vücutlarını taşıyorlar el arabalarına. Öylesine çok toplu mezar, sayısız...

Bu günün geç saatlerinde yeniden bir zaman yolculuğu yapıyorum, bu sefer yol arkadaşım Narine Haçaturyan bana, şair Shiraz'ın kardeşi olan ninesinin hikayesini anlatıyor. 1920lerde Amerikalılar, Alexandropol yetimlerini ABDye götürmeye başlıyorlar. Bir çoğu bunu bir lütuf olarak görüyor, binler için bir kurtuluş yolu. Eski zamanlara yolculuk yaparken, bir çocuğun ağlamasını duyuyoruz. Arkadaşları Amerikalı aileler tarafından evlat edinilmiş. Onları kaybettiği için ağlıyor. Neden kendisi de gitmiyor, enden kendisi de evlat edinilmemiş? Ağlamaya devam ediyor. "Ben çirkinim, kimse beni evlat edinmek istemiyor." Vücudum incecik. Narine Hanım, Amerika'ya gönderilecek çocuklarda aranan "güzellik" standartlarını anlatıyor. Buna göre, başparmağın genişliği bileğin yarisi kadar, bileğin genişliği ise boynun yarisi, boynunki de belin yarisi olmalıydı. Ve çocuğun boyu 60 ile 70 santim arası olmalıydı.



walk the Alexandropol streets of the 1920s, as epidemics take the lives of hundreds of children every day. The carts go round the orphanages every morning, and the orphans put the bodies of their dead friends on these carts. So many mass graves, there is no count.

Later that day I travel back in time again, this time with Narine Khachatryan, who tells the story of her grandmother, Shiraz's sister. In the 1920s, Americans started shipping the orphans from Alexandropol to the USA. Many perceived this as an act of kindness, a survival route for thousands. Yet, as we travel back in time, we hear a kid crying about her friends being adopted by US families. She is very upset at losing them. So why wasn't she adopted herself? She goes on crying, "I am ugly, so no one would adopt me." My body feels smaller as Ms. Narine talks about the "beauty" standards used to select children to be sent to the US. According to these, "beautiful" meant that the circumference of the thumb should be half of the wrist, the circumference of the wrist half of the neck, and the circumference of the neck half of the waist. In

addition, the height of the child should be between 60 and 70 cm.

It is late evening and I am back in my hotel room. I start googling "life in Alexandropol orphanages". There is a list of articles in English and Armenian. The orphanages should have had their traditions and the people working there should have done their best to bring a small light into the lives of the orphans. Here, an orphan says that on every New Year's Eve they were asked to knit a present bag. The bigger the present bag, the bigger presents they received. They knitted all night long to have the biggest present bag hanging on the fireplace for the New Year, and then dreamt of getting the biggest present.

Here is Shiraz himself saying that he had learnt shoemaking in the orphanage. Once, when he was already a famous writer, he went to a shoemaker and paid him three roubles and told him to buy himself a beer while he fixed his shoe with the same professionalism as he recited a poem.





մի շարք հոգիվածներ են հանդիպում: Որբանոցները պետք է իրենց ավանդույթներն ունեցած լինեն, և մարդիկ, որոնք աշխատում էին այնտեղ, պիտի ամեն ինչ անեն՝ որբերի կյանքը գոնե մի փոքր լուսավոր դարձնելու համար: Ահա մի որբ պատմում է, որ ամեն Նոր տարվա նախօրեին նրանց խնդրում էին նվերի պարկ գործել: Որբան մեծ էր ստացվում պարկը, այնքան ավելի մեծ նվերներ էին ստանում: Նրանք ողջ գիշեր գործում էին, որպեսզի Նոր տարվա բովարտումն անցնեին իրենց նվերի պարկն ամենամեծը լինելու, և երազում ամենամեծ նվերը ստանալու մասին:

Ահա Շիրազն ինքն է նշում, որ կոշիկ կարել սովորել է որբանոցում: Մի անգամ, երբ նա արդեն հայտնի գրող էր, գնում է կոշկակարի մոտ, վճարում երեք ռուբլի՝ ասելով, որ վերջինս գնա իր համար գարեջուր գնի, մինչ նա կարում է իր կոշիկը նույն վարպետությանը, որով բանաստեղծություններ էր կարդում:

Ալկհայտ է, որ որբանոցները Ալեքսանդրապոլ քաղաք նոր մշակույթ բերեցին: Մրա վառ օրինակը ֆուտբոլի թիմն է: Հայ գրող և հասարակական գործիչ Վահան Չերազին հրավիրում են Ստամբուլից, որպեսզի զբաղվի երեխաների ֆիզիկական կրթությամբ, և նա ստեղծում է ֆուտբոլի թիմ: 1922-ին ֆուտբոլն արդեն Ալեքսանդրապոլում շատ տարածված էր, չնայած քաղաքում ֆուտբոլի դաշտ չկար, և երեխաները ստիպված էին մարզումների համար այլ տեղեր օգտագործել: Ալեքսանդրապոլի որբանոցների ֆուտբոլի թիմը իր գոյության ութ տարում երբևէ չի պարտվել, և նույնիսկ հնարավորություն է ստացել մասնակցելու Ասորկոլկասյան մրցումներին:

#### Ալեքսանդրապոլից Թալին

Հայաստանում մեր հաջորդ կանգառը Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Աշնակ գյուղն է, որը բնակեցված է ցեղասպանությունից փրկված սասունցիների ժառանգներով: Հայ ֆիդայիներն այս կողմերում շատ հայտնի են: Այստեղ իմանում ենք ցեղասպանության ժամանակ և դրանից հետո որբերին և երեխաներին փրկելու համար նրանց կատարած հսկայական աշխատանքի մասին: 1918-1919 թթ. ընկած ժամանակահատվածում, իսկ այնուհետև մինչև 1925 թ. Արևմտյան Հայաստանում տեղանքը և համայնքները լավ ճանաչող հայ ֆիդայիները գնում էին տարբեր բնակավայրեր՝ փնտրելով հայ որբերի, որոնց կամ փրկել, կամ գողացել էին քրդերը: Ասում են՝ նրանք ամեն երեխայի համար մեկ ոսկեդրամ են վճարել:

1 Անգլերեն տառադարձմամբ ազգանունը Terchoonian է: Զանի որ անգլերենում չկա «տ» հնչյունը և համապատասխան տառը, հայերնում ազգանունը կարող է ինչպես «Տերչունյան» այնպես էլ Թերչունյան և կամ Թոչունյան կարդացվել:

Apparently, orphanages brought a new culture to the city of Alexandrapol. A vivid example of this was the football team. The Armenian writer and public figure Vahan Cheraç was invited from Istanbul to direct the physical education of the kids, so he created a football team. By 1922, football had become very popular in Alexandrapol, even though there was no football ground and the kids were forced to use other spaces for training. But the Alexandrapol orphanages football team existed for eight years, never lost a single match, and even got a chance to take part in Transcaucasia competitions.

#### From Alexandrapol to Talin

Our next stop in Armenia is Ashnak, a village in the Talin region of the Aragatsotn province, populated by the descendants of Genocide survivors from Sassoun. Armenian Freedom Fighters, or Fedayees, from Western Armenia are quite popular here. And we learn about a campaign that they initiated to save Genocide orphans. Between 1918 and 1919,

Akşam geç oldu ve otel odamdayım. Google’da “Alexandrapol yetimhanelerinde yaşam” ariyorum. İngi-lizce ve Ermenice bir sürü yazı var. Yetimhanelerin kendi gelenekleri olmalydı ve yetimlerin hayatında küçük bir işik yakmak için ellerinden geleni yapmış olmalydılar. Bak burada, bir yetim anlatıyor, her Yeni Yıl arifesinde bir hediye çantasi örüyorlarmış. Ne kadar büyük örebi-lirlerse çantayı, o kadar da büyük bir hediye alırlarmış. Yeni Yıl hediyesi için şömine yanına asılacak en büyük çantayı yapabilmek için tüm gece örerlermiş, sonra da en büyük hediyei alacaklarının rüyasıyla uyurlarmış.

Ve burada şair Shiraz, bize yetimhanede pabuç-çuluğu öğrendiğini anlatıyor. Birgün, artık meşhur bir şair olduktan sonra, lostraya gitmiş ve ustaya üç ruble vermiş ve kendine bir bira almasını söylemiş, bu arada şair yazdığı ustalikle pabuçlarını tamir etmiş.

Yetimhaneler, Alexandrapol şehrine yeni bir kültür getirmişler. Bunun canlı örneklerinden biri ise Futbol takimiymiş. İstanbul’dan tanınmış yazar Vahan Cheraç çocukların spor eğitimi için davet edilmiş ve burada bir futbol takimi kurmuş.

1922 yilina gelindiğinde futbol Gümrü’de son derece popüler bir spor haline gelmiş. Futbol sahası bile olmayan yetimler, kendi yaşadıkları alanlarda futbol oynuyor, idman yapıyor. Enteresandır, Gümrü yetimlerinin futbol takimi sekiz yıl boyunca varlığını sürdürebilmiş ve bütün bu yıllar boyunca bir kez bile yenilmemiş, öyle ki Transkafkasya Turnuvası’na katılma imkanı bile elde etmişler.

#### Alexandrapol’den Talin’e

Ermenistan’daki bir sonraki durağımız, soyki-rimdan kurtulan Sason’luların torunlarının yaşadığı, Aragatsotn vilayetine Talin yöresinde olan Aşnak köyü. Buralarda Ermeni Özgürlük Savaşçileri, Fedailer çok meşhurdur. Fedailerin, soykırım yetimlerini kurtarmak için başlattıkları bir kampanyayı öğreniyoruz burada: 1918 ile 1919 arasında, hatta zaman zaman 1925lere kadar, Bati Ermenistan’i ve orada yaşayanları iyi bilen fedailer, köylere gidip Kürtler tarafından kaçırılmış ya da kurtarılmış Ermeni yetimleri aramışlar. Ve her bir çocuk için bir altın para ödemişler.

and then sporadically up until 1925, Armenian Fedayees, who knew well the area and communities in Western Armenia, would go to different settlements in search of Armenian orphans either kidnapped or rescued by Kurds. They are known to have paid one gold coin per child.



Ես այստեղ ոչ  
մի օր չեմ հիշում,  
որ մրսած լինեմ

Ben Hiç Burada  
Üşüdüğümü  
Hatırlamıyorum

I do not remember  
being cold here

Հեղինակ՝ Դենիզ Օզաքաչան  
Լուսանկարներ՝ «Թռչունյան տուն» որբանոցի արխիվ

Օրեր շարունակ Գյումրիի ամեն փողոցում անդադար տատիս ու պապիս եմ հանդիպում: Դեմքեր, ծիծաղ, ձայներ, շեշտադրություն. կարծես այդ ամենն ինձ անընդհատ ստիպում է մտածել այն վայրերի մասին, որտեղ նրանք են մեծացել: Վայրեր, որ մի ժամանակ ուրիշներին են պատկանել, իրենց ընտանիքը կորցրած մարդկանց, վայրեր, որ մարդիկ մտապահել են իրենց ավերված տներից հեռու, ճամփորդության վերջում ... Ուրեմն պետք է վերակառուցված վայրեր փնտրեմ ու նրանց «չկորած» երեխաներին:

1988 թվականի Գյումրիի երկրաշարժից ամենաշատ տուժած թաղամասերից մեկում եմ: Տնակների արանքով անցնելով՝ մտնում եմ մի երկհարկանի շենք, ուր Վանից բերված 110 տարեկան օրորոց ու 150 տարեկան սեղան կա: «Շիրակ» կոչվող հասարակական կազմակերպության՝ թաղամասի բնակիչների հետ աշխատելու համար հիմնած այդ տանն եմ շրջում: Ժպտուն աչքերով, ոսկե ատամներով մի մարդ ինձ տանում է 100 տարեկան գրամոֆոնի մոտ՝ ծիծաղելով ձայնակավառակ է դնում: Ականջ եմ դնում խշխշոցին, ինձ անհասկանալի լեզվով երգ է լսվում. կարծես պապս մահից հետո Հայաստանում մի գրամոֆոնի մեջ ուրիշ լեզվով է շարունակում իր կյանքը: Այդ մարդն ինձ ժպտում է, պապիս ծափտն եմ հիշում, ես էլ եմ ծափում: Ձայնակավառակը փոխում ենք, սկսում ենք պարել: Հետո ինձ տանում է իր սպիտակ շների մոտ, ասում է, որ մենք լավ մարդիկ ենք, որ իր շները գիտեն թե ովքեր են լավ մարդիկ: Խոսում ենք. ո՛չ անգլերեն, ո՛չ թուրքերեն, ո՛չ էլ հայերեն. մի լեզվով ենք խոսում, որ մեզնից բացի ոչ ոք չի կարող հասկանալ: Ասում է, որ շները գիտեն՝ ովքեր են լավ մարդիկ. շունը քիթն ականջիս է մոտեցնում: Շունը, ես ու մարդը խոսում ենք. ո՛չ անգլերեն, ո՛չ թուրքերեն, ո՛չ հայերեն. լրիվ ուրիշ լեզվով, որ մեզնից բացի ոչ ոք չի կարող հասկանալ: Ես նրան ասում եմ «կոնյակ»՝ ձեռքիս երևակայական բաժակը բերանիս մոտեցնելով, գրամոֆոնից եկող ձայնի կողքին՝ գոյություն չունեցող սեղանին եմ դնում գլուխս: Ինձ հասակակից, կրկին այլ լեզվով խոսող մի երիտասարդ է ինձ արթնացնում ու թևանցուկ անելով՝ փայտից վանա կատվի մոտ է տանում: Ուշադիր նայում եմ կատվի աչքերին՝ մեկը կապույտ, մյուսը՝ դարչնագույն: Կենտրոնանում եմ կատվի աչքերը միմյանցից հեռացնող դատարկության վրա: Այդ պահին 1914 թվականից մնացած գնացքի տոմսի առաջ կանգնած հայ ընկերս ինձ ձայն է տալիս. «Կարսից Գյումրի գնացող ուղևորի տոմս է»: Դարչնագույն-կապույտ, Գյումրի-Կարս, դատարկություն ու Արարատ եմ ասում: Արդյոք կարող են միմյանց կորցրած եղբայրները գտնել իրար, արդյոք կանաչի ու դարչնագույնի



Metin: Deniz Ocakacan  
Fotoğraflar: Terchoonian Yetimhanesi Arşivi

Günlerdir Gümrü'nün her sokağında anean-nem ve dedemle karşılaşip duruyorum. Yüzler, gülüşler, sesler, vurgular; onların içinde büyüdükleri mekanları düşünmeye itiyor sürekli. Bir zamanlar başkalarının olan mekanları, ailesini kaybetmiş insanların, harabeye dönmüş evlerinden uzakta, kat ettikleri büyük yolcu-luğun sonucunda kafalarında taşıdıkları mekanları... O halde yeniden inşa edilen mekanlar bulmalıyım ve bu mekanların “kaybolmayan” çocuklarını.

1988 Gümrü Depreminin en korkunç sonuçlarını yaşamış bir semtteyim. Prefabrik evlerin arasından geçerek, Van'dan gelen 110 yıllık bir beşik ve 150 yıllık bir masaya ev sahipliği yapan iki katlı ahşap bir binaya giriyorum. Shirak adlı bir sivil toplum kuruluşunun bölge halkıyla dayanışmak için oluşturduğu bu evde dolaşmaya başlıyorum. Gözleri gülen, altın dişli bir adam beni alıp 100 yıllık bir gramfonun yanına götürüyor, gülerек bir plak takıyor. Cizirti seslerine kulağımı götürüyorum, anlamadığım dilde bir parça çalıyor; sanki dedem ölmünden sonra Ermenistan'da bir gramfonun içinde başka bir dilde yaşamini sürdürmeye devam ediyor. Adam bana gülüyor, dedemin gülüşü aklıma geliyor, ben de gülüyorum. Plağı değiştiriyoruz, oynamaya başlıyoruz. Sonra beni bembeyaz köpeklerinin yanına götürüyor, bana benim iyi bir insan olduğumu anlatıyor, köpeklerin iyi insanları tanıdığını söylüyor. Konuşuyoruz; ne İngilizce, ne Türkçe, ne de Ermenice, bizden başka kim-

Text: Deniz Ocakacan  
Photos: Terchoonian Orphanage Archive

For days I have been running into my grandfather and grandmother in Gyumri. Their faces, smiles, voices and accents; these make me constantly think about the places they grew up. I have to think about these places that once belonged to other people, these places that people who have lost their families, who are far away from their ruined homes, think about when they remember their homes at the end of their journeys. I need to find these places, these lives, which were built again and the never-to-be-lost-children in them.

I am in a district which bares the most terrible scars of the 1988 earthquake. Passing through the prefabricated houses I enter a two-storey wooden building which contains a 110-year-old cradle and a 150-year-old table from Van. I begin rambling through this house, which was created by the civil society organization “Shirak” to estab-

lish solidarity with the inhabitants of this district. A man with smiling eyes and a golden tooth takes me to a 100-year-old gramophone and puts on a record. I listen to the crackling sound with all my attention. A song is playing in a language that I do not understand. It is as if my grandfather continues to live in this gramophone in Armenia, in another language. The man smiles at me, and I recall my grandfather's smile and smile back. We change the record, we begin to dance. Then he takes me to some snow-white dogs, he tells me that I am a good person, he says that the dogs feel and recognize good people. The dog puts his snout to my ear. The dog, the man and me are speaking, neither in English, nor in Turkish, nor in Armenian, we are speaking in a language that no one but us can understand. I say “cognac,” and put a non-existent glass to my mouth, then I put my head on the non-existent table, and doze by the voice of the gramophone. A boy, I guess more or less the same age as I am, and who again speaks in a language I do not understand, wakes me up, takes my arm and leads



խառնուրդից հնարավոր է նման ճերմակ գույն ստանալ, հարցնում եմ ինքս ինձ: Պատերին կախած նկարների միջից Գյումրի հասած մի աղջիկ երեխա կարծես շրջանակից դուրս գալով՝ ինձ է մոտենում: Ինձ տանում է մի այլ շենքի մոտ ու հեռանում:

Սա Թոչոնյան տունն է: Դռան մոտ հին ամերիկյան ավտոբուս է կանգնած: Օգտագործվում է մանկատան ծառայությունների համար: Գլխավոր շենքի աստիճաններից եմ նստում 7-13 տարեկան երեխաների հետ: «Ընդհանրապես թուրքերին չեմ սիրում, բայց նրանց սիրեցի», – ասում է 12 տարեկան մի երեխա՝ ինձ ցույց տալով: Միասին դուռը բացելով՝ ներս ենք մտնում: Չախ կողմում Հրանտ Դինքի նկարն եմ տեսնում: Այստեղ գալուց առաջ Թուրքայում մի հին մանկատուն (Քամի Արմեն) էի գնացել, որը մոռացության է մատնված, շենքի մի մասը պետության հրամանով քանդել են: Այստեղ մեծացած ու իր հուշերը բուրդզերներից փրկելու համար պայքարող մի սան ծառից պոկած մի քանի թուզ մեզ մեկնելով այսպես էր ասել. «Ես այստեղ ոչ մի օր չեմ հիշում, որ մրսած լինեմ»: Հրանտ Դինքն էլ էր Ստամբուլի այդ մանկատանը մեծացել, նա, ով Թուրքիայում ապրող բոլոր ինքնությունները միավորող լեզու էր ստեղծել: Անցյալում թողած մեղքի զգացումն այստեղ միշտ պտտվում է մարդու շուրջ: Ամեն ինչ պարզ կանգնած էր իմ առաջ: Երեխաները փորձ էին անում հաջորդ օրվա բեմադրության համար և մի ժպտերես երեխա՝ ամեն ինչից անտեղյակ, «Ճանաչիր հայոց ցեղասպանությունը» գրությամբ շապիկով պարում էր իմ առաջ: Հինա աստիճանով եմ բարձրանում, որ պետք է իրականում

senin anlamayacağı başka bir dilde. Köpeklerin iyi insanları tanıdığını söylüyor, köpek burnunu kulağıma götürüyor. Köpek, ben ve adam konuşuyoruz; ne İngilizce, ne Türkçe, ne de Ermenice, bizden başka kimsenin anlamayacağı başka bir dilde. Ben ona “konyak” diyorum, elimdeki olmayan bardağı ağzıma götürüp, gramafondan gelen sesin yanındaki olmayan sofraya kafamı koyuyorum. Aynı yaşlarda olduğumu tahmin ettiğim, yine başka bir dil konuşan genç bir çocuk beni uyandırıyor, koluma girerek tahtadan yapılmış bir Van kedisinin önüne götürüyor. Bir gözü mavi diğer gözü kahverengi olan kediyi dalıp gidiyorum. Kedinin gözlerini birbirinden ayıran boşluğa odaklanıyorum. O sirada 1914 yılına ait bir tren biletinin önünde duran Ermeni arkadaşım sesleniyor; “Kars’tan Gümrü’ye giden bir yolcunun tren bileti bu.” Kahverengi/mavi, Gümrü/Kars, boşluk ve Ararat diyorum. Birbirini kaybetmiş kardeşlerin birbirine kavuşması mümkün olabilir mi, yeşille kahverenginin birleştiği böyle bir beyazlık bulunabilir mi? diye soruyorum kendi kendime. Duvarlarda asılı duran fotoğraflar arasından Gümrü’ye ulaşabilmiş bir kız çocuğu, sanki çerçeveden çıkıp yanıma geliyor. Beni başka bir binanın önünde bırakıp gidiyor.

Burasi Terchoonian Yetimhanesi. Kapisinda eski bir Amerikan otobüsü duruyor. Yetimhanenin servis araci olarak kullaniliyor. Ana binanın önündeki merdivenlerde 7-13 yaşlari arasindaki çocuklarla oturuyorum. “Türkleri genelde sevmem ama bunlari sevdim” diyor 12 yaşında bir ses beni işaret ederek. Birlikte kapiyi açip içeri giriyoruz. Sol tarafa Hrant Dink’in fotoğrafını görüyorum. Buraya gelmeden önce unutulmaya birakilmiş, bir kısmi devlet tarafından yikilmiş eski bir yetimhaneye (Kamp Armen) gitmiştim Tuzla’da; orada büyümüş olan ve anilarini dozerlerin altından kurtarmak için mücadele eden bir yetim, dalından kopardığı incirleri bize uzatirken şöyle demişti “Ben burada hiç üşüdüğümü hatirlamiyorum.” Kendisi de İstanbul’da bir yetimhanede büyümüş olan, Türkiye’de yaşayan bütün kimlikleri birleştiren bir dil geliştirdiği için öldürülen Hrant Dink de işte o yetimhanede büyümüştü. Arkasinda biraktığı suçluluk duygusu burada etrafında dolaşiyor insanin. Her şey çok somut karşımda duruyor. Çocuklar yarin çıkacaklari bir gösteri için hazirlik yapıyor ve güler yüzlü

me to a wooden Van cat. I gaze on the cat, which has one blue eye and one brown. I concentrate on an emptiness that separates the cat’s eyes from each other. At that moment my Armenian friend, who is standing, pointing at a 1914 train ticket says, “This is the train ticket from Kars to Gyumri.” I say, blue/brown, Gyumri/Kars, emptiness and Ararat. I ask myself, “Is it possible for siblings who once lost each other to find each other again? Can a whiteness be found in an area where green and brown are united?” On one of the photos hanging on the wall there is a girl who was able to reach Gyumri. Then she steps out of the frame to my side. She leaves me in front of another building and goes.

This is the Terchoonian Orphanage. There is an old American bus standing at its door, used for the orphans. In front of the main building I am sitting on the stairs with children aged 7 to 11. “I usually do not like Turkish people but I like this one,” says a 12-year-old voice pointing at me. We open the door together and go

inside. On the left-hand wall I see Hrant Dink’s photo. Before coming here I had visited an old orphanage (Kamp Armen) in Tuzla, Turkey, which had been abandoned. An orphan, who was trying to save his memories before they were demolished by bulldozers, offered figs that he had just picked from a tree, and told us: “I do not remember being cold here.” Hrant Dink, who was murdered because he had developed a language which united all identities in Turkey, was from this same orphanage. The feeling of guilt he left behind is wandering around here. Everything in front of me seems very tangible. The kids are rehearsing for the next day’s performance and the smiling kid with a “Recognize the Genocide” t-shirt is dancing in front of me, unconscious of everything.

Now I am climbing the stairs, and with every step a picture from 1915 revives in my eyes. I counted exactly a hundred kids in the orphanage, and there should have been a hundred steps. When I get to the second floor, it is my grandmother meeting me. She takes me

հարյուր քայլից բաղկացած լինի: Ամեն քայլի 1915-ից մի նկար է կենդանանում իմ առաջ: Մանկատանն ուղիղ 100 երեխա հաշվեցի: Երկրորդ հարկ հասնելիս մայրս է ինձ դիմավորում՝ ծաղկավոր զգեստը հագին: Նա ինձ շենքն է ցույց տալիս և չնայած ինձ անհայտ լեզվով է խոսում, զգում եմ երեխաների հանդեպ նրա տածած սերը: Առանց շտապելու, դանդաղ իջնում ենք: Ինձ զսպում եմ, որ նրան չգրկեմ: Ժպտաղեն ու ամաչկոտ ծիծաղով երեխաներ են վազելով անցնում մեր կողքով: Դասարաններ ենք մտնում: Հետաքրքրասեր հայացքներով մեզ նայող ամաչկոտ երեխաներ, արտասովող երեխաներ, ժպտացող երեխաներ ենք տեսնում: Մտնում ենք ընդարձակ սրահ: Հարյուր տարի առաջ ցեղասպանությունից փրկված երեխաների նկարներով պատերին եմ նայում: Ըստրում եմ մահամերձ երեխայի գրկած մարդու նկարը: Հայացքի սարսափը հասկանալու համար պետք չէր շատ ջանք գործադրել: Մեզ ամեն բան բացատրող կինն այդ նկարի կողքի մեկ այլ նկար է ցույց տալիս: Առողջ, ժպտացող աղջիկ երեխայի նկար է, ասում է, որ այդ երկու նկարում նույն երեխան է, որ այդ նկարները տարիներ անց այդ աղջիկն էլ է տեսել:

Դուրս գալու ժամանակն է: Մինչ երեխաները մեզ մինչև դուռն են ուղեկցում, տխրությունս լրիվ ուրիշ զգացմունքի է տեղի տալիս: Քամի Արմենի ձայնն եմ հիշում. «Ես այստեղ ոչ մի օր չեմ հիշում, որ մրսած լինեմ»: Ներսուն ջերմություն եմ զգում, հասկանում եմ, որ ինչպես մարդիկ, այնպես էլ վայրերը չեն կարող կորչել: Ես դուրս եմ գալիս, բայց Հրանտ Դինքը, սատիկս ու երեխաները ներսում են մնում:



on a tour with her flower-printed dress and the love she gives the children that I can see despite the fact that she speaks in a language that I do not understand. We walk without any hurry. I can hardly contain myself from hugging her. Kids are passing us, running with their smiling faces and giggling skittishly. We enter the classes. We see shy children, infiltrating us with their curious eyes, crying children, smiling children. We arrive at a broad room. I look at the walls decorated with pictures of children who survived the Genocide. I choose a picture of someone holding a child that is nearly dead. The terror in her eyes is easily discernible. The woman showing us around points to the next picture. This shows a girl who is healthy and smiling, she says both are the same child, and that many years later these photos were seen by this same girl, when she came to visit the orphanage.

It's time to go. While the children are seeing us to the door my sadness gives way to another feeling. I remember the voice in Kamp Armen, which said, "I do not remember being cold here." I feel

bir çocuk "Soykirim Tani!" tısırtıyla her şeyden habersiz önümde dans ediyor. Aslında yüz basamaklı olması gereken bir merdiveni çıkıyorum şimdi. Her adımında 1915'ten bir fotoğraf canlanıyor gözümde. Tam 100 tane çocuk saydım bir yetimhanede. İkinci kata ulaştığımda ananem karşıyor beni. Çiçek desenleriyle kaplı elbisesi, bilmediğim bir dilde konuştuğu halde çocuklara verdiği gördüğüm sevgisiyle bizi dolaştırmaya başlıyor. Acele etmeden, yavaş yavaş yürüyoruz. Sarılmamak için kendimi zor tutuyorum. Gülen yüzleri ve utangaç kikirdayışlarıyla çocuklar koşuyor yanımızdan. Sınıflara giriyoruz. Meraklı gözleriyle bizi süzen utangaç çocuklar, ağlayan çocuklar, gülen çocuklar görüyoruz. Geniş bir salona geliyoruz. Yüz yıl önce soykirimden kaçmayı başarmış çocukların fotoğraflarıyla süslü duvarlara bakıyorum. Ölmek üzere olan bir çocuğu kucağında tutan birisinin fotoğrafını seçiyorum. Bakışlarındaki dehşet kolayca anlaşılıyor. Bizi gezdiren kadın, yanında duran başka bir fotoğrafı gösteriyor. Sağlığı yerinde, gülen bir kız çocuğunun fotoğrafı bu, ikisinin de aynı çocuk olduğunu söylüyor, bu baktığımız fotoğrafların da yıllar sonra kızı tarafından görüldüğünü söylüyor.

Dişari çıkma vakti geliyor. Çocuklar, kapiya kadar geçirirken, üzüntüm yerini başka bir duyguya birakıyor. Kamp Armen'deki ses aklıma geliyor; "Ben burada hiç üşüdüğümü hatırlamıyorum." İçim isiniyor, insanlar gibi mekanların da kaybolmayabildiğini hissediyorum. Ben dişari çıkıyorum ama Hrant Dink, ananem ve çocuklar içerde kalıyor.

the warmth inside; I feel that just like people, places can be saved too. I leave, but Hrant Dink, my grandmother and the kids stay there.

# Arazinin derinlerinde

## Դաշտի խորքում

Metin ve fotoğraflar: Pinar Kolancı  
Eçmiadzin – Nersesyan Ormanı

Günümüzde Nersesyan Ormanı, Eçmiadzin güney doğusunda yer alan küçük bir park. Geçmişte ise, Patrik Ashtarak'lı Nerses (1843–1857) döneminde Ermeni Kilisesi tarafından dikimine başlanan bir ormandı. 1915–1916 soykırımı sırasında bu orman, Van ve Eleşkirt'ten kaçan ve burada, tentelerin altında yaşayan siğimacılara ev sahipliği yapmış. Ağaçların çoğu isinma amacıyla kesilmiş. Siğimacılar salgın hastalıkların pençesinde yaşama tutunmaya çalışmış ancak pek çoğu tifo ve koleradan ölmüş. Ormanın ağaçsız kalan bölümlerinde kitlesel mezarlar kazılmış. Medzamor Nükleer Enerji Santrali'nin kapatılması ve Karabağ savaşı gerekçesi ile Türkiye ile Azerbaycan tarafından Ermenistan'a uygulanan ambargo sonucunda, 1992–1994 yılları arasında ülkede ciddi bir elektrik sikintisi baş göstermiş. Bunun sonucunda, Sovyet döneminde dikilmiş olan dut ağaçları da 1990'li yıllarda isinma amacıyla odun elde edebilmek için kesilmiş.

Տեքստը և լուսանկարները՝ Փննար Քոլանջալը  
Էջմիածին. Ներսիսյան անտառ

Ներսիսյան անտառն այժմ Էջմիածնի հարավ-արևելքում ընկած մի փոքրիկ զբոսայգի է: Սկզբնապես այն անտառ է եղել՝ տնկված Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ (1843–1857թթ): 1915–1916 թթ. Վանից և Ալաշկերտից ցեղասպանությունից փրկվածները ապաստան են գտել այստեղ՝ վրանների տակ: Նրանք անտառի մեծ մասը կտրել են և օգտագործել որպես վառելիքայտ: Գաղթականների շարքերում տարածվող վարակիչ հիվանդությունները հսկայական թվով մարդկանց կյանքեր են տարել. շատերը մահացել են տիֆից ու դիֆտերիայից: Այդ ժամանակ անտառի ծառագործի հատվածում ստեղծվել են զանգվածային գերեզմաններ: Սովետական տարիներին այդ տարածքում թթի ծառեր են տնկվել, որոնք մարդիկ կտրել են 1990-ականներին բնակարանները տաքացնելու համար, քանի որ Հայաստանի տարածքի մեծ մասում 1992–1994 թթ. էլեկտրականություն չկար: Դա Մեծամորի ատոմակայանի փակման և ի պատասխան Ղարաբաղյան պատերազմի՝ Թուրքիայի և Ադրբեջանի իրականացրած շրջափակման հետևանք էր:

## Depth of field

Text and photos: Pinar Kolancı  
Ejmiadzin – The Necessyan Forest

The Necessyan forest is currently a small park south-east of Ejmiadzin. It was initially a forest planted by the head of the Armenian Church, Catholicos Nerses of Ashtarak (1843–1857). In 1915–1916 Genocide survivors from Van and Alashkert were sheltered here under tents. They cut down most of the trees for fuel. Infectious diseases took their toll and many died from typhus and cholera. Mass graves were created in by then treeless parts of the forest. Under the Soviets, mulberry trees were planted in the area, which were then cut down in the 1990s for heating purposes, as there was no electricity in most of Armenia from 1992 to 1994 as a result of the closure of the Madzamor nuclear power plant and the blockade imposed by Turkey and Azerbaijan in response to the Karabakh war.





#### Gümrü – Katliam Vadisi

Katliam Vadisi, Gümrü'nün 25 kilometre kuzey doğusunda, Shirak bölgesinde bulunan Jajour köyünün 3 kilometre dışında bulunuyor. Burası, Alexandrapol ve Karakilise bölgelerinde yaşayan ve 1918-1920 yılları arasında Türk Ordusu tarafından öldürülen Ermenilerin toplu mezarlarının bulunduğu yer.

#### Գյումրի. Ջարդի ձոր

Ջարդի ձորն ընկած է Գյումրիից 25 կմ հյուսիս-արևելք և Շիրակի մարզի Ջաջուր գյուղից 3 կիլոմետր արևելք: Այստեղ է գտնվում 1918-1920թթ թուրքական բանակի կողմից կոտարածի ենթարկված Ալեքսանդրապոլի և Դարաքիլիսայի հայերի զանգվածային գերեզմանը:

#### Gyumri – The Massacre Gorge

The Massacre Gorge is 25 kilometres north-east of Gyumri and three kilometres east of Jajour village in the Shirak province. It is a mass grave for Armenians of Alexandrapol and Gharakilisa, killed between 1918 and 1920 by the Turkish Army.



#### Irind – Ghachakh Vadisi

Ghachakh Vadisi, Ermenistan'ın Aragatsotn bölgesinde, Irind köyü yakınlarında bulunuyor. Sovyet iktidarının kurulmasının ardından, Fedai adıyla da bilinen Ermeni Özgürlük Savaşçıları burada saklanmışlar. Bu savaşçıların büyük bölümü, şu anda Türkiye'nin güney doğusunda yer alan Muş ve Sason kökenliymiş. En ünlüleri de Isro adında bir fedaiymiş. Bu fedailer, halki soykırım yıllarında Türk ve Kürt güçlerin saldırılarından korusun. Ardından Türkiye'nin doğusundaki köylerde yaşayan Türk ve Kürt ailelerden, bu ailelere verilen Ermeni yetimleri toplamışlar. Ailelere, getirdikleri her bir Ermeni yetim için bir altın ödüyorlarmış. Stalin'in baskı yıllarında “milliyetçi” olmakla suçlanmışlar ve kaçıp bu vadiye saklanmışlar. Onlara, bu bölgede yaşayan ve Muş ve Sason bölgesinden kaçıp buraya gelmiş olan bölge halki yardım etmiş. En nihayetinde aralarında Isro'nun da bulunduğu üçü, Sovyet gizli servisi tarafından yakalanıp bu vadide öldürülmüş.

#### Իրինդ. Ղաչաղի ձոր

Ղաչաղի ձորը գտնվում է Արագածոտնի մարզի Իրինդ գյուղի մոտ: Սովետական իշխանության հաստատումից հետո այն դարձավ թաքստոց ծագումով Մուշից և Սասունից (այժմ հարավ-արևելյան Թուրքիա) որոշ հայ ֆիդայիների համար, որոնցից ամենանշանավորն Իսրոն էր: Նրանք 1915-1920 թվականներն ընկած ժամանակահատվածում պաշտպանում էին իրենց ժողովրդին թուրքական և քրդական զինված ուժերից, իսկ հետո Արևելյան Թուրքիայի տարբեր թուրքական և քրդական ընտանիքներից գտան և հավաքեցին ցեղասպանության հետևանքով որբացած երեխաներին՝ յուրաքանչյուրի համար վճարելով մեկ ոսկեդրամ: Ստալինյան բռնաճշմունքների ժամանակ նրանց հալածում էին իբրև «ազգայնականների», իսկ նրանք տեղի բնակիչների՝ ցեղասպանությունից փրկված մշեցիների և սասունցիների օգնությամբ թաքնվում էին ձորում: Ի վերջո նրանցից երեքին, այդ թվում Իսրոյին, բռնեցին և հենց այդ ձորում սպանեցին չեկիստները:

#### Irind – The Ghachakh Gorge

Ghachakh Gorge is situated near Irind village in the Aragatsotn Province of Armenia. After the establishment of Soviet rule it became a hiding place for some Armenian freedom fighters or Fedayes originally from Moush and Sasoun (currently in South-Eastern Turkey), most prominent of them being Isro. They protected their people from armed Turkish and Kurdish forces throughout 1915-1920 and then collected Genocide orphans from different Turkish and Kurdish families in Eastern Turkey, paying one gold coin per child. During Stalin's repressions they were persecuted as "nationalists", and hid in the gorge with the help of the local population, Genocide survivors from Moush and Sasoun. Eventually three of them, including Isro, were caught and killed by CheKa forces in the same gorge.

# Թեյ անծանոթների հետ

## Yabancılarla içilen çay

Հեղինակ Արտյոմ Բաբայան  
Նկարագրողուհի Փոլ Ռուտրեխտ

Metin: Artyom Babayan  
İllüstrasyon: Paul Rutrecht

«Թեյ անծանոթների հետ» նախագիծը սկիզբ է առել 2015 թվականին Երևանում «Awesome Foundation»-ի (Օսքմ հիմնադրամի) երևանյան մասնաճյուղի աջակցությամբ: Գաղափարը պարզ է. վերցնում ենք մեր թեյի պարագաները, տեղավորվում ենք որևէ հանրային տարածքում (գրոսայգի, հրապարակ, փողոց), թեյ ենք պատրաստում չինական թեյախմության ավանդույթներով և հրավիրում անծանոթներին մեզ հետ թեյելու: Մենք ներկայացնում ենք թեյը, հետո մեզ, իսկ հետո նրանք են ներկայանում: Մենք կիսվում ենք մեր պատմություններով, նրանք՝ իրենց: Մարդիկ հեռանում են, հնարավոր է՝ նրանց երկրորդ անգամ էլ երբեք չհանդիպենք: Նրանք շարունակում են իրենց ճամփան, իսկ մենք մնում և դիմավորում ենք նոր անծանոթների: Իրար նման, բայց միևնույն ժամանակ իրարից տարբեր. տարբեր մարդիկ, տարբեր կյանքեր:

Երբ միացա «Գործելով միասին» ծրագրին, մտածեցի «Թեյ անծանոթների հետ» կազմակերպել Հայաստանում և Թուրքիայում մեր երթուղու տարբեր կանգառներում և բացահայտել մեզ հանդիպած տարբեր մարդկանց ընտանեկան պատմություններն ու

“Yabancılarla içilen çay” 2015 yılında Erivan’da , “Awesome Yerevan Vakfi” desteğiyle başlamış bir projedir. Fikir aslında çok basit: Çay takimlerimizi alıyoruz, kamusal alanlarda (parklar, meydanlar, sokaklar) oturuyor, Çin çay seremonisi geleneklerine uygun çayimizi hazırlıyoruz ve oradan geçen, tanımadığımız insanları davet ediyoruz. Biz çayı anlatıyoruz, sonra kendimizi tanıtıyoruz, sonra da onlar kendilerini tanıtıyor. Biz hikayelerimizi paylaşıyoruz, onlar da kendi hikayelerini paylaşıyor. Ve gidiyorlar, herhalde onları hiç bir daha görmeyeceğiz. Onlar yollarına devam ediyor, biz kalıyoruz ve tanımadığımız başka insanlarla karşılaşıyoruz. Hep aynı, hep aynı, ama farklı hikayeler, farklı hayatlar.

“Acting Together” projesine katıldığımında, “Yabancılarla içilen Çay” seanslarını, Ermenistan ve Türkiye’den geçecek yollarımıza dahil etmeyi önerdim. Böylece, farklı insanlarla karşılaşacak, onların aile ve Soykırım hikayelerini öğrenecektik. Yabancılarla, tanımadığım insanlarla

## Tea with strangers

Text: Artyom Babayan  
Illustrations: Paul Rutrecht

“Tea with Strangers” is a project that was launched in Yerevan in 2015 with the help of the “Awesome Foundation Yerevan”. The idea is simple. We take our tea sets, go sit in public places (parks, squares, streets), prepare tea according to Chinese tea ceremony traditions, and invite strangers to join us to drink it. We introduce the tea, then ourselves, then they introduce themselves. We share our stories, they share theirs. People leave, we’ll probably never see them again. They continue their path, we stay and greet new strangers. Same-same, but different. Different stories, different lives.

When I joined the “Acting Together” project, I came up with the idea to organize “Tea with Strangers” sessions in different locations on our route through Armenia and Turkey and so discover the family narratives and Genocide memories of different people we meet. After sharing tea with strangers, I collected their stories, the stories of their families, as well as their thoughts

հուշերը ցեղասպանության մասին: Անձանթների հետ թեյ խմելիս հավաքեցի նրանց ընտանիքների պատմությունները, ինչպես նաև նրանց կարծիքները Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ: Մեր ուղևորության առաջին հասվածի ընթացքում ես գրի առա այն մարդկանց պատմությունները, որոնք մեզ միացան Գյումրիում, Էջմիածնում և Երևանում: Անհամբերությամբ սպասում եմ, թե երբ եմ լսելու Թուրքիայի ճանապարհներին հանդիպելիք անձանթների պատմությունները:



չայի paylaşıırken, onların ve ailelerinin hikâyelerini ve Ermenistan – Türkiye ilişkileri hakkında düşündüklerini topladım. Gezimizin ilk bölümünde, Gümrü, Eçmiadzin ve Erivan’da bize misafir olanların hikayelerini yazdım. Merakla Türkiye yollarında dinleyeceğim hikayeleri bekliyorum.

Մեր ընտանիքի արմատները գալիս են Կիլիկիայից. իմ պապերը Սիսից՝ Լեռնային Կիլիկիայից են եղել: Հետո, գիտեք, հայերի հավածանքների ժամանակ քուրդ բեկը կախում է եղբայներից մեկին մեր ազգատոհմի՝ մեծ պապիկին էլի: Հորաքույրն է պատում՝ մեծ հորաքույրը, ասում է կանայք՝ քույրերը, երկու որդի ունեին, վերջում գալիս են դեպի Իսթանբուլ, դեպի Ալեքսանդրեթ. էն ժամանակ Ալեքսանդրեթը Սիրիայի տարածք էր, մինչև 1938 թվականը էդպես այստեղ հաստատվում են: Իսկ 1938 թվականին, երբ Իսթանբուլի սանջակը հանձնվում է Թուրքերին, մերոնք երկրորդ ցեղասպանությունից վախենալով, կոտորածից վախենալով՝ Հալեպի վրայով անցնում են դեպի Բեյրութ և 1946 թվականին հայրենադարձվում են Գյումրի՝ Հայաստան: Մենք մինչև հիմա բարեկամներ ունենք Բեյրութում, բայց հետները կապ չկա: Ոչ ոք չի մնացել Արևմտյան Հայաստանում, բոլորը փախել են:

Հարություն, 55 տարեկան, Գյումրի

Ես մենակ էնքան եմ իմացել, որ տատիկի քեռին ու մայրը շատ փոքր հասակում են եկել: Մեկը հինգ, մյուսը՝ ուց որ ութ տարեկան, ու իրանք իրանց ծնողներին էլ էդպես չեն հիշում, որովհետև ծնողները մնացել են Էստեղ, իսկ էրեկները ուրիշ մարդկանց հետ եկել-հասել են էս կողմերը: Էստեղից միայն մայրն ու քեռին են եկել. մյուսները կամ կորել են կամ զոհվել են, էլ չկան էլի, կապը խզվել և իրանց հետ: Հիմա չեմ կարող ասել ինչ և եղել: Կարող և փոքրերին ուղարկել են, որ հետո իրանք իրանց ունեցվածքին նայեն կամ չզգիտեմ ինչ, բայց մենակ էդ երկուսն են եկել:

Կարեն, 33 տարեկան Գյումրի

Մորական կողմն մշեցի են, Մշո կողմերից գաղթել-եկել են Արևելյան Հայաստան, բայց շատ բան չի պատմել պապիկս. միշտ էդ թեմայից խուսափել և խուսել: Հիշում եմ, որ ինքը դուրով էր նվազում՝ դուրովակհար էր, ես շատ էի սիրում, ու Մշո երգերն էր անընդհատ երգում: Էդ երգերի տակ ես մեծացել եմ ու շատ-շատ եմ սիրել: Էդպես ինքը հայրենասիրություն, ազգասիրություն է դաստիարակել մեզ, միշտ ասում էր, որ հայրենիքը պահեք-փայտիայեք: Ես շատ պուճուր էի, բայց հիշում եմ, որ ասում էր՝

on Armenia-Turkey relations. For the first part of our road trip I wrote down the stories of people who joined us in Gyumri, Etchmiadzin and Yerevan. I look forward to hearing the stories of strangers I will encounter during the trip on the roads of Turkey.

My forefathers were from Sis, in the mountainous region of Cilicia. During the Kurdish, Turkish persecutions of the Armenians, a Kurdish bek handed one of the grandfathers of our family. My aunt told me a story that two women, sisters, took their two sons and came to Iskenderun, which was part of Syria back then. My father was born in Iskenderun. And in 1938, when the Sanjak of Iskenderun surrendered to the Turkish army, our family escaped to Beirut via Aleppo, because they feared a second Genocide. And in 1946, they repatriated to Gyumri. We still have relatives in Beirut, but there is no connection with them. Nobody is left in Western Armenia, everyone escaped.

Harutyun, 55, Gyumri, Armenia

Atalarım, Kilikya'nın dağlık bölgelerinden. Kozan'lı. Türklerle Kürtler'in Ermenileri katlettiği günlerde, bir Kürt beyi dedemi asarak öldürmüş. Halamin anlattığına göre iki kadın, iki kız kardeş, yanlarına iki oğullarını da alarak o zamanlar Suriye'ye bağlı olan İskenderun'a gelmişler. Babam İskenderun'da doğmuş. 1938 yılında, İskenderun sancağı Türk ordusuna teslim olduğu vakit, ailem ikinci kez soykırım yaşanacağı korkusu ile Halep üzerinden Beyrut'a kaçmış. 1946 yılında da Gümrü'ye gelmişler. Beyrut'ta hala akrabalarımız var ama onlarla pek bir bağlantımız da kalmadı. Batı Ermenistan'da ise kimsemiz kalmadı. Herkes kaçtı.

Harutyun, 55, Gümrü, Ermenistan

Büyük annemin annesi ve amcası, çok küçük yaşta Ermenistan'a gelmişler. Biri 5, diğeri 8 yaşındaymış. Onlar kendi anne babalarını hiç hatırlamıyorlar. Büyük annemin annesi ile amcası başka insanlarla birlikte buraya gelirken, anne babaları orada (Bati Ermenistan) kalmışlar. Büyük ihtimalle de yaşanan katliamlar sırasında öldürüldüler. Onlardan hiç haber alamamış, dolayısıyla başlarına tam olarak ne geldiğini söyleyemem. Belki de çocuklarını buraya gönderip, kendileri oradaki mallarının başında kalmayı tercih ettiler. Bilemiyorum. Ama aileden geriye sadece büyükannem ile kardeşi kalmış. Sene 1915'miş.

Karen, 33, Gümrü, Ermenistan

Anne tarafından dedem, Muşlıydu. Soykırım sırasında Ermenistan'a kaçmışlar. Ama bu olay hakkında pek konuşmazdı. Ne zaman bahsi açılrsa, bir biçimde geçiştirirdi. Ama duduk çaldığını ve Muş şarkıları söylediğini hatırlıyorum. Ben o şarkılarla büyüdüm. O, anavatanına duyduğu sevgiyi o şarkılarla ifade ediyordu. Çok küçüktüm, henüz 4-5 yaşındaydım. Ama onun, Muş'ta gizli hazineler olduğunu anlattığını hatırlıyorum. Büyü-

The mother and maternal uncle of my grandmother arrived in Armenia at a young age, one was five years old, the other eight. They don't even remember their parents, because they were left there [in Western Armenia]. Their parents were most likely killed during the massacres. There was no communication with them, so I can't say what happened to them. Perhaps they sent the children while they stayed to take care of their property, I don't know. But the only ones who survived were them, my grandma and her brother. That was in 1915.

Karen, 33, Gyumri, Armenia

My grandfather on my mum's side was from the Moush area. During the Genocide they escaped to Armenia [Eastern Armenia, then Russian Empire], but he didn't speak much about it. He avoided the topic. But I remember that he played duduk and sang Moush songs, so I grew up listening to those songs. He was

իրենք գանձեր ունեն պահված ու ես միշտ երագում էի, որ մեծանայի գնայի էդ գանձերը գտնեի: Իմ հայրենասիրության ծիլերը իմ պապն է իմ մեջ գցել՝ սիրել հայկական երգը, հայկական մշակույթը: Պապիկիս անունը Աղաբեկ Ավետիսյան էր: Չսայած ավանդաբար հորական կողմն է որոշում քո ծագումը, ես ինձ մշեցի եմ համարում, որովհետև պապիկիցս շատ բան եմ ժառանգել: Երբ ես փոքր էի, ծնողներս ինձ քնացնելու համար տարբեր երգեր էին երգում, բայց ոչ մի երգ չէր օգնում, բացի պապիկիս երգած «Զարթո՛ր, Լաւ...»-ից:

Նագիկ, 27 տարեկան, Գյումրի



düğümde oraya gidip bu hazineleri bulduğumu hayal ederdim. Ermeni müziğine ve kültürüne olan sevgim de dedemden gelir. Adi Aghabek Avetisyan'di. Her ne kadar genelde kökeniniz baba tarafınız üzerinden tanımlanıyor olsa da, ben kendimi mshetsi (Muşlu) hissedirim. Söylediği bir şarkiyi hala hatırlıyorum: “Zartir, Lao” (Uyan oğul). Ben küçükken annem ve babam, uyumam için bana şarki söylerlerdi. Lakin bu şarki dışında hiç biri işe yaramazdı.

Nazik, 27, Gümrü, Ermenistan

Ես երկրորդ կուրսում աշխատեցի գեղասպանության թեմայով: Սկզբում երկրորդ կուրսում աշխատեցի՝ ցուցահանդես պետք է ունենայինք, չէի կարող տրամադրվել, չէր ստացվում: Սկսեցի հոյի կանանց նկարել, որովհետև շատ էի ազդվել, որ հոյի կանանց են սպանել, կամ հոյի կանանց ինչ-որ ծաղրանքով են վերաբերվել ու սպանել են էրեխեքի: Նոր սերունդն են սպանել: Էդ էր իմ վրա ազդել շատ ու ես փորձում էի էդ պատկերել՝ ինչից որ ազդվել եմ: Ես մի տարի աշխատեցի ու 2014 թվին Գյումրու գեղավեստի ակադեմիայում ունեցանք լավ ցուցահանդես, որը շատ հաջողված էր:

Բայց մյուս կողմից էլ ես հիշում եմ, թե ինչպես էր տատիկս այն ժամանակվա մասին պատմում, որ կային թուրքեր, որ ասում էին նրանց. «Գնացե՛ք՝ փախե՛ք, մենք կօգնենք, փախե՛ք»: Բայց շատերը չեն հավատացել, մնացել են: Եղել են թուրքեր, որ պահել են հայերին իրենց տներում:

Թամարա, 20 տարեկան, Գյումրի

Ermeni soykırımı hakkında daha derinlemesine bilgi edinmeye başladığımda, hamile kadınların ve çocukların katledilmiş oldukları gerçeği karşısında şok olmuştum. Böylelikle hamile kadın resimleri yapmaya başladım. Bu masum kurbanlara adanmış, onların yaşadığı aciyi hissederek yaptığı bir dizi üzerinde bir sene çalıştım. Çalışmanın sonunda, Gümrü Sanat Akademisi'nde, bu resimlerimi sergilediğim bir sergi düzenlemeyi de başardım. Öte yandan büyük annemin bize bir zamanlar şunları anlattığını da hatırlıyorum: Onlara kaçın, kendinizi kurtarın, size yardım edeceğiz diyen Türkler de varmış. Ama pek çoğu onlara kulak vermemiş ve orada kalmaya devam etmiş. Hatta pek çok Türk, Ermenileri evlerinde saklamış.

Tamara, 20, Gümrü, Ermenistan

Մամայիս պապիկը Ղարսի կողմից է եղել ու իրա ընտանիքը գեղասպանության զոհ է եղել: Ինքը պատիկ էրելիս ա եղել ու, երբ տեսել են որ հնար չկա, դե էրեխեքին էլ են չէ վերջիվերջո ջարդել, էստեղ էրեխուն հողի մեջ թաղել են՝ ընդամենը բաց թողնելով իրա բերնի հատվածը, որ ինքը շնչէ: Ու տենց երկու շաբաթ էդ էրեխուն պահել են՝ հանել են հաց են տվել էլի պատկացրել են: Բայց հայրը զոհ է դառել. սպանել են թուրքերը: Հետո արդեն կարողացել են բերել դեպի Գյումրիի կողմեր:

Մերուժան, 21 տարեկան, Գյումրի

1970'li yıllarda, “Anavatanin Sesi” gazetesinden çalışma arkadaşlarımla birlikte Batı Ermenistan'a gittik. Aile köklerimin geldiği Pasinler bölgesini de ziyaret edeceğimizden, annem oradan bir avuç toprak getirmemi ve öldüğünde bu toprağı mezarına atmami istedi. Ama benim başka planlarım da vardı. Beraberimde buğday tohumu da getirmeyi, o tohumları o toprakta yetiştirmeyi, hasat etmeyi, o buğdaydan un yapmayı, o undan komünyon ekmeğı pişirmeyi ve kilisedeki bir ayinde dağıtmayı düşünüyordum. Ama sinirdaki Türk görevli, toprağı elimden aldı ve bunun için özel bir izne ihtiyacım olduğunu söyledi. Yine de bir biçimde o toprağı Ermenistan'a getirmeyi başardık. Ne yazık ki annem vefat etti. Ayinde o buğdaydan yaptığımız komünyon ekmeklerini dağıttık.

Visla, 80, Etchmiadzin, Erivan

Ninesinin ve babasının tüm üzüntülerini taşıyan yaşlı bir hanım  
An old lady who carries all the sorrows of her grandmother and father
- 2      Վերապրած Ազգը  
Sağ Kurtulan Bir Ulus  
The survivor nation
- 3      Կիսատ մնացած պատմություն  
yarım kalan bir hikaye  
The only word he remembered became his surname
- 4      Ուրիշ լինելու հավանականությունը  
Bir Başkası Olabilme İhtimali  
The possibility of becoming someone else
- 5      Քույրերից` անծանոթներ, անծանոթներից` քույրեր  
Kardeşleşen Yabancılar, Yabancılaşan Kardeşler  
From sisters into strangers, from strangers into sisters
- 6      Գևորգյանների ընտանեկան պատմությունը  
Gevorgyanların aile hatıratı  
The family story of the Gevorgyans
- 7      Քիրվալի գելին  
Հարսնացուն Փիրվալիից  
The bride from Pirvali
- 8      Այդքան մոտ սահմանին և այդքան հեռու Կարսից  
Sınıra Çok Yakın, Kars'a Çok Uzak  
So near to the border, so far from Kars
- 9      Մորաքույրս և ես  
Teyzem ve Ben  
My aunt and me

## Tracing history

1 **Տատի և հոր վշտերն ապրում են ծեր կնոջ հետ  
Էլ քանի՞ ցեղասպանություն և պատերազմ մինչև քաղաքական  
գործիչներն ուշքի գան**

Հեղինակ՝ Երվանդ Աբրահամյան

Սա անհավանական պատմություն է մի խիզախ կնոջ մասին, որը կարողացել է Օսմանյան Կայսրության Սասունի գավառում (որն այժմ Թուրքիայում է) իր մանկանը փրկել մահից՝ հասցնելով նրան ներկայիս Հայաստանի Իրինդ գյուղ: Լսելով այդ պատմությունը, որ պատմեց իր թոռնուհին, ես տխրեցի, բայց ինչ-որ առումով նաև հպարտություն զգացի: Իր հայրենի բնակավայրից փախչելիս նա կորցրել է իր հինգ երեխաներից չորսին: Փախուստի պահին վերջին երեխան գրկում է եղել, իսկ հետևից վազել է ամուսինը, կրակոցի ձայներ են լսվել, շրջվել է ու տեսել գետնին ընկած ամուսնուն: Երեխան ձեռքին՝ հնարավորինս արագ հասել և թաքնվել է մոտակա անտառում: Այստեղ նրան գտել են երկու քուրդ տղամարդ և տարել իրենց տուն, որտեղ նա մեկ տարի սպասուհի է եղել, մինչև ի վերջո հաջողացրել է անցնել Ռուսական Կայսրություն:

Այստեղ նրան նոր փորձություններ էին սպասվում: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ որդուն տարել են ռազմաճակատ: Շուտով որդին գերի է ընկել ու տարվել Ֆրանսիա: Որդին վերադարձել է, բայց կրկին զորակոչվել 1945-ին՝ այս անգամ ռուս-ճապոնական պատերազմում կռվելու: Լուր է եկել, թե նա սպանվել է մարտում: Բայց ինն ամիս անց նա անսպասելիորեն տուն է եկել: Շատ չանցած որդուն աքսորում են Սիբիր միայն այն պատճառով, որ երկու անգամ գերի էր ընկել: Մայրը հուսահատ ցավի մեջ կսկծում էր իր միակ ողջ մնացած երեխայի ճակատագրի համար: Նա շարունակ կրկնում էր մարդկանց, թե միակ բանը, որ նա բերել էր իր հետ նախկին տնից, իրենից խլել էին նոր տանը: Որդին, այնուամենայնիվ, հաղթահարեց նաև աքսորը: Շատ տարիներ անց նա վերադարձավ տուն, սակայն այդ ժամանակ մայրն արդեն շատ ծեր էր և կարճ ժամանակ անց մահացավ:

1 An old lady who carries all the sorrows of her grandmother and father  
How many more genocides and wars until politicians stop  
Text: Yervand Abrahamyan

This is the unbelievable story of a very brave woman who managed to save her infant son from death and bring him over from the region of Sassoun, in the Ottoman Empire, nowadays Turkey, to Irind village, in what is now Armenia. Listening to her story, told by her granddaughter, made me feel sad and somehow very proud. She lost four of her five children and her husband while escaping her hometown. She was running with her only child in her arms, her husband following. When she heard gun shots she looked back and saw her husband lying on the ground. Holding her child in her arms she ran as

# 1 Ninesinin ve babasının tüm üzüntülerini taşıyan yaşlı bir hanım Siyasetçiler duruncaya dek daha kaç soykırım yaşanacak, kaç savaş çıkacak

Metin: Yervand Abrahamian

Bu inanılması güç hikaye, küçük oğlunu ölümden kurtararak, bugün Türkiye olan Osmanlı İmparatorluğunun Sason bölgesinden , bugün Ermenistan'da olan İrind kasabasına getirmeyi başaran cesur bir kadının hikayesi.

Torunu tarafından anlatılan hikayesini dinlediğimde hem hüzünlendim, hem de bir biçimde gurur duydum. Evini terk etmek zorunda kaldığında, beş çocuğunun dördünü ve kocasını kaybetmişti. Tek kalan çocuğu kucağında kaçıyordu. Arkasından kocası geliyordu. Silah seslerini duyup geriye baktığında, kocasını kanlar içinde yerde gördü. Kollarındaki çocuğuna daha siki sarılıp, olanca gücüyle koşmaya başladı. Ormanda saklandı. Orada iki Kürt erkek tarafından bulundu. Onlar tarafından götürüldüğü evde bir yıl hizmetçi olarak çalıştı, daha sonra siniri geçip Rus İmparatorluğu topraklarına ulaşmayı başardı.

Ancak orada da kendisini bekleyen yeni zorluklar vardı. İkinci Dünya Savaşı başlamıştı. Oğlu askere alındı ve cepheye gönderildi. Kısa süre sonra orada esir düştü ve Fransa'ya götürüldü. Geri dönmeyi başarsa da, 1945 yılında, bu kez de Rusya-Japonya Savaşında savaşın diye, yeniden askere alındı. Bir süre sonra çatışmalarda hayatını yitirmiş olduğu haberi geldi. Neyse ki bu haber doğru değildi, 9 ay sonra evine gelmeyi başardı. Ancak bu kez de Sibirya'ya sürgüne gönderildi. İki kez esir düşmüş olmakla suçlanıyordu. Anne, hayatta kalan biricik oğlunun bu kadersizliği karşısında biçare bir acı içindeydi. Herkese, eski evinden getirebildiği biricik varlığın da bu yeni evinde elinden alındığını anlatıp duruyordu. Neyse ki oğlu, sürgünde de hayatta kalmayı başardı. Yıllar sonra evine dönmüştü. Ancak annesi artık çok yaşlanmıştı ve çok geçmeden de hayata gözlerini yumdu.

Bu acı hikaye, basit yaşamların siyaset eliyle nasıl da derin yaralar aldığını düşündürdü bana. Siradan insanların, nasıl da iktidarların elinde basit ve değersiz bir oyuncuğa dönüşüverdiklerini anlattı bana: değersizdiler ve sadece bir kitleden biriydiler. Oysa ki bir çocuk anası için her daim değerli ve tektir. Ve ana sevgisinin nasıl da bir adanmışlık olduğunu anladım: Beklemeye hazır, umut dolu, asla pes etmeyen, asla vaz geçmeyen bir sevgi.

fast as she could and hid in the woods. Here a couple of Kurdish men found her. They took her home, where she worked as a housekeeper for a year, until she finally managed to cross over to the Russian Empire.

Here new difficult experiences awaited her. The Second World War had begun. Her son was drafted to the front. Soon he was captured and was taken to France. He did come back but was drafted again in 1945; this time into the Soviet-Japanese War. The news arrived that he was killed during battle. But one day nine months later, he suddenly came home – only to be sent to exile to Siberia, for having been taken prisoner twice. The mother was helplessly in pain and grieved over the destiny of her only surviving child. She kept telling people that the only thing

she brought from her old home had been taken away from her at her new home. Her son, however, survived the exile too. He came back home many years later, but by that time the mother was very old and died shortly after.

This bitter story made me think of how simple lives are influenced by politics. It made me recognise the reality of how ordinary people turn into toys of governments: worthless and just one of many. Whereas a child to a mother is always very precious and unique. I realised how devoted a mother's love is: ready to wait, to hope and to never give up.

## 2 Վերապրած ազգը

### Մասնակցի մտորումները ցեղասպանության և անձնական վշտի մասին

Հեղինակ Ալիսա Ավագյան

Ես ցեղասպանությունը վերապրած ընտանիքի ժառանգ եմ: Մեծացել եմ՝ լսելով պատմություններ, թե ինչպես են նախապապիս եղբայրները սպանվել ցեղասպանության տարիներին: Միննույն ժամանակ ես սկսեցի թուրքական հեռուստատեսություն դիտել և ծանոթացա նրանց ժամանակակից մշակույթին, կենսակերպին և արժեքներին: Ես սկսեցի ճանաչել նրանց դերասաններին և երգիչներին, ու նրանք ինձ դուր եկան: Այս ազդեցությունն ինձ մոտ Թուրքիայի և նրա ժողովրդի հանդեպ նոր մտածելակերպ ձևավորեց, որն այնքան էլ չէր համապատասխանում Հայաստանում տիրող հասարակական կարծիքին: Դրա համար ինձ մեղավոր էի զգում, որովհետև Թուրքիան ցեղասպանական քաղաքականություն վարած Օսմանյան Կայսրության ժառանգորդն է: Իմ մանկական ուղեղում այդ երկու մտքերը երկար ժամանակ կռիվ էին տալիս, բայց դրանցից ոչ մեկն առավելություն չէր ստանում: Հետո այդ վիճակից ելքը գտա. որոշեցի, որ էլ չեմ կենտրոնանալու այդ հարցերի վրա՝ այդպիսով խուսափելով ներքին կոնֆլիկտից:

Երկար ժամանակ հավատարիմ մնացի այդ սկզբունքին և ձևավորվեցի որպես անհատ, որն ազգության, կրոնի կամ մեկ այլ պատճառով մարդկանց միջև խտրականություն չի դնում: Մակայն չէի գիտակցում ժառանգության և հիշողության այն ողջ ծանրությունը, որն իր մեջ անփոփում է «ցեղասպանություն» հասկացությունը: Երբ առաջին անգամ հարցազրույց արեցի, իսկ հետո մեկ ուրիշը, այնուհետև ևս մեկը, սկսեցի ներաշխարհումս աստիճանական փոփոխություններ նկատել: Կամաց-կամաց այդ կորուստների ցավը և ողջ մնացածների ու նահատակվածների մասին մտքերը սկսեցին ավելի ու ավելի իրական դառնալ:

Ցեղասպանության մասին առաջին ֆիլմը, որ նայել եմ, «Մայրիկն» է (Անրի Վերնոյի ֆիլմը): Այդ ֆիլմում մի նախադասություն կա, որ հավերժ ինձ հետ է. «Մինչև մեր ընտանիքում մահ չեղավ, ես մահվան մասին երբեք չէի մտածում. դա մի բան էր, որ պատահել էր ուրիշներին, բոլորին, բացի ինձնից»: Երբ հիշում եմ, հասկանում եմ, որ այդ նախադասությունն իմ մասին է: Մինչև չկորցրի այն մարդուն, որին ամենաշատն էի սիրում, և որն ամենաթանկն էր ինձ համար, ես լիովին չըմբռնեցի այդ ցավը: Բայց երբ լսեցի մարդկանց պատմությունները, սկսեցի զգալ ոչ միայն մեկ մարդ կորցնելու, այլև մի ամբողջ ազգ, միլիոնավոր չճնված ժառանգների կորցնելու ցավը:

Ես ցավ էի ապրում ցեղասպանության զոհերի համար, բայց իմ կապն ավելի խորն էր որբերի հետ: Երբ գնացի «Թոչունյան տուն», որը շատ որբերի էր ապաստան տվել 1915-1930 թվականների ընթացքում, զգացի այն անսահման ցավը, որ լինում է ծնող կորցնելիս, որն էլ երբեք չի վերադառնալու, և այն

#### 2 The survivor nation The reflections of a participant on the Genocide and personal pain

Text: Alisa Avagyan

I am a person whose family survived the Genocide. I grew up with stories about how my great-grandfather's brothers had been slaughtered during the Genocide. At the same time I started watching Turkish television and got acquainted with their contemporary culture, lifestyle, values. I got to know their actors and singers and I liked them. This interaction opened a new perspective for me towards Turkey and the people of Turkey that did not exactly correspond to the widespread public opinion in Armenia. I would

feel guilty about that because Turkey is the heir of the Ottoman Empire that perpetrated a genocidal policy. My childish mind fought back and forth with these two thoughts and for a long time, but none of them prevailed. Then I found a way out of the situation – I decided that I was not going to push either issue and thus I hoped to avoid any conflict with myself. I held to this for a long time and shaped myself into a person who did not discriminate against people for their nationality, religion or anything else. But I did not quite realise the whole burden of the heritage and memory that the notion of Genocide contains. When I came to do my first interview, and then another, and then another, I noticed a gradual change in my inner world. Little by little, the pain of these losses and the people who had died and survived began to surface in my heart.

## 2 Sağ Kurtulan Bir Ulus Soykırımı katılmış birinin yansımaları ve kişisel acı

Metin: Alisa Avagyan

Soykirimden sağ çıkmayı başarmış bir aileye mensubum. Büyük büyük babamın kardeşlerinin soykırım sırasında nasıl katledildiğini anlatan hikayelerle büyüdüm. Yine aynı dönemde Türk televizyonlarını izlemeye başladım; onları günümüzdeki kültürleri, yaşam biçimleri ve değerleri ile tanıştım. Onların aktörlerini ve şarkıcılarını tanıdım ve sevdim. İşte bu karşılıklı etkileşim bende, Türkiye ve Türk halkına dair, Ermenistan'da yaygın olarak kabul gören kamuoyu algısının dışında bir bakış açisinin de oluşmasına kapı araladı. Bu durum bende suçluluk duygusu yaratıyordu. Neticede Türkiye Osmanlı İmparatorluğu'nun varisiydi ve onlarda soykırım politikasını hayata geçirenlerden başkası değildi. Çocuk zihnim bu iki düşünce arasında gidip geliyor, ancak hiç biri baskın gelmiyordu. Derken bu sorunun çözümünü buldum. Bu iki düşünüş biçiminden birini zihnimden atacak, böylelikle de içimde yaşadığım çatışmaya bir son verebilecektim. Bunu uzun süre boyunca başardım da. Hiç kimseyi ulusal kimliğinden, dini inanişinden, yahut benzeri başka bir nedenden dolayı ayırmacılığa tabi tutan biri değildim. Ne var ki kültüre mirasın ve soykırımı uğramış olma gerçeğinin sahip olduğu ağırlığın hiç de farkında değilmişim doğrusu. İlk görüşme, ikincisi, üçüncüsü derken iç dünyamda adım adım bir değişim de yaşandı. Yitirdiklerimizin ve soykırımın acisini yaşayıp hayatta kalmayı başaranların acisi, adım adım yüreğimde açığa çıktı.

Soykırım hakkında izlediğim ilk film *Mayrig* idi (Yönetmenliğini Henri Verneuil'in yaptığı Ana adlı film). O filmde bir söz, asla aklımdan çıkmaz: "Ailemde bir ölüm yaşanmadan önce, ölüm hakkında hiç düşünmezdim. Bu başka insanların başına gelen bir şeydi, benim değil." Şimdi dönüp geriye baktığımda, bunun tam da benim durumumu anlatan bir söz olduğunu kavriyorum. En çok sevdiğim, yaşamımda en derin yeri kaplayan insanı yitirmeden önce, bunun acisini anlayamıyordum. İnsanların öykülerini dinlemeye başladığımda sadece birilerini yitirmiş olmanın acisini hissetmekle kalmadım; aynı zamanda henüz dünyaya gelmemiş bireyleri ile birlikte bütün bir ulusu yitirmenin acisini da hissettim.

Sadece soykırım kurbanlarının acisini hissetmekle kalmadım, yetim kalanlarla aramda derin bir bağ da kuruldu. 1915-1930 yılları arasında çok sayıda yetime ev sahipliği yapmış olan Terchoonian evine gittiğimde, ebeveynini kaybetmiş olmanın tarifsiz acisini hissettim; yarımsız ve yapayalnız kalmış olma halinden asla kurtulamayacak olma duygusunu yaşadım. Genç

The first film that I watched about the Genocide was "Mayrig" ("Mother", directed by Henri Verneuil). There was a phrase in the movie that stuck with me forever: "Before there was a death in our family I never thought about it. It was something that happened to other people, to anyone but me." Thinking back I think this describes me. Before I lost the person I loved most and held dearest in my life I did not understand the pain. But when I listened to people's stories, I began feeling the pain of losing not only one person, but the pain of losing a whole nation, with millions of unborn descendants.

I felt pain for the victims of the Genocide, but I had a deeper connection with the orphans. When I went to the Terchoonian house, which had sheltered a lot of orphans from

1915 up to 1930, I felt the endless pain of losing a parent who will never come back, and the helplessness and loneliness that will never stop. Losing a parent at a young age leaves an open wound which will neither heal nor even form new flesh to leave a scar. But the loss of a family in a massacre causes a different layer of trauma, one that has been proven to transcend generations and be passed down to us. We all feel the anguish of having been subjected to a crime against humanity and one of the most serious historical injustices there ever was. I feel that a trauma of this scale caused the Armenian people to grow self-contained and develop a sense of bitter indignation toward the world powers, who not only do not accept the fact of the Genocide, but use it as political leverage.

անհուսությունն ու միայնությունը, որ երբեք չեն դադարելու: Երիտասարդ տարիքում ծնող կորցնելը մի բաց վերք է թողնում, որը երբեք չի բուժվի ու չի սպիանա: Բայց կոտորածի ժամանակ ընտանիք կորցնելը ասպրումների լրիվ այլ շերտ է, որը, սերնդեսերունդ փոխանցվել է մեզ: Մենք բոլորս զգում ենք մարդկության դեմ կատարված հանցանքի և երբևիցե տեղի ունեցած ամենածանր պատմական անարդարություններից մեկին ենթարկված լինելու տառապանքը: Ինձ թվում է՝ նման տրավման է պատճառ դարձել, որ հայ ժողովրդը դառնա ինքնամփոփ և մեծ բարկությամբ լցվի մեծ տերությունների հանդեպ, որոնք ոչ միայն չեն ընդունում ցեղասպանության փաստը, այլև օգտագործում են այն իբրև իրենց քաղաքական նպատակներին հասնելու միջոց:

Այս ծրագրից առաջ ես երբեք չէի կենտրոնացել Արևմտյան Հայաստանի իմ ընկալման վրա: Նկատի չունեմ Արևելյան Թուրքիայի այժմյան իրականությունը, այլ ավերված և ոչնչացված հայկական ժառանգությունը, որի մասին պատմում էին այն մարդիկ, ում հանդիպել եմ:

Արևմտյան Հայաստանի իմ պատկերն անապատ է, որտեղ ընդամենը մի կանգուն ծառ կա: Մնացած ամեն ինչ ավերված է և առհավետ կորած: Եթե փակեմ աչքերս, կտեսնեմ ու կլսեմ այն երեխաների լացը, որ կորցրին իրենց ծնողներին, և այն ծնողների ողբը, որոնց երեխաներին խլել էին ձեռքներից: Ես կզգամ այն տանջող և անհաղթահարելի ցավը, որը, քանի դեռ մենք կանք, երբեք չի անցնի: Բայց այդ մեկ ծառն ինձ համար հույսի խորհրդանիշ է, որն ինձ ստիպում է հասկանալ, որ մենք ոչ միայն գոհ էինք, այլև ահավոր ոճիր վերապրածներ: Այդ ծառը վերածնելու ուժ ունի, որը կարող է և պետք է օգտագործվի՝ աշխարհի ցանկացած ժողովրդին պատուհասած կոտորածները և ցեղասպանությունները կանխելու համար:

Այժմ էլ ավելի խորն եմ ընկալում «ցեղասպանությանից մազապուրծ ընտանիքի ժառանգ» արտահայտության իմաստը և անսահման հպարտ եմ, որ կարող եմ ասել՝ ես մի մարդ եմ, որի ընտանիքը վերապրել է ցեղասպանությունը:

### 3 Կիսատ մնացած պատմություն Միակ բառը, որ նա հիշում էր դարձավ իր ազգանունը

Հեղինակ էլիֆ Թևեր Օզեր

Երբ նրան գտան, 7-8 տարեկան էր, փոքր եղբոր հետ էր: Եղբոր ձեռքից պինդ բռնած՝ շատ էր քայլել, շատ էին հոգնել: Ով գիտի՝ որտեղով են անցել, ինչեր են տեսել, ինչու են ուզել քարավանին միանալ:

«Անունդ ի՞նչ է», – հարցրել են, ասել է. «Հակոբ»: «Քանի՞ տարեկան ես», – հարցրել են, չէր հիշում: «Որտե՞ղ են մայրդ ու հայրդ»: Չէր հիշում: «Ուրիշ քույր-եղբայր ունե՞ս»: Չէր հիշում: «Ի՞նչ է պատահել ձեզ, ի՞նչ է եղել»: Չէր հիշում:

Before this project I never concentrated on my perceptions of Western Armenia – I don't mean the actual reality of eastern Turkey but the devastated and destroyed Armenian heritage that the people we met told us about.

My own image of Western Armenia is that of a desert with only one tree standing in it, everything else destroyed and all life gone. If I close my eyes I will see and hear the cries of the children who lost their parents and the mourning of the parents whose children were taken away from them. I will feel the excruciating and overwhelming pain that will never go away as long as we live. But that one tree is the symbol of hope for me, which makes me realise that we were not only victims but survivors of a terrible crime. That tree has a regenerating strength that can and should be used to prevent catastrophes like

massacres or Genocide happening to any other people in this world. Now I can understand the phrase and I am infinitely proud to be able to say, "I am a person whose family survived the Genocide."

yaşta bir ebeveynini kaybetmiş olmanın açtığı yara asla iyileşmiyor, o yara asla kabuk bağlamıyor. Bütün bir aileyi katliamda yitirmiş olmak ise nesilden nesile aktarılan ve bize dek ulaşan bir travmaya neden oluyor. Hepimiz, insanlığa karşı işlenmiş korkunç bir suçun, tarihte emsali görülmemiş ve bundan sonra da görülmeyecek olan korkunç bir adaletsizliğin istirabını yaşıyoruz. İşte bu travmanın Ermeni halkını kendi içine kapattığını ve sadece soykırım gerçeğini kabullenmemekle kalmayan, aynı zamanda onu bir politik koz olarak da kullanan küresel güçlere karşı öfke yarattığını hissediyorum.

Bu proje öncesinde, Batı Ermenistan konusundaki algıma asla odaklanmış değildim. Sadece Türkiye'nin doğusunda yaşanan güncel durumdan bahsetmiyorum. Aynı zamanda, konuştuğumuz kişilerin anlatılarına konu olan yıkılmış ve yok edilmiş Ermeni kültürel mirasını da kastediyorum.

Şimdi aklımdaki Batı Ermenistan imgesi, baştan sona çölden oluşan, bir tek ağacın ayakta kaldığı, onun dışında her şeyin yok edildiği, yaşamın oradan çekip gittiği bir coğrafya biçiminde. Gözümü kapattığımda, ebeveynleri öldürülmüş çocukların ağlayışını duyuyor, onları görüyorum. Çocukları ellerinden çekilip alınmış ebeveynlerin ağıtlarını duyuyor, onları görüyorum. Bu ağır ve istirap dolu acının, yaşadığım sürece beni asla terk etmeyeceğini hissediyorum. Ama işte o tek ağaç var ya, işte o benim için umudu simgeliyor. O ağaç, sadece korkunç bir soykırımın kurbanları olmadığımızı, aynı zamanda başka halkların benzeri felaketler yaşamalarının önüne geçecek bir gücü üretmekle de mükellef olduğumuzu anlatıyor.

Artık bu cümlelerin gerçek muhtevasını kavriyor ve onu gururla söylüyorum: “Ben, soykırımdan sağ çıkmayı başarmış bir aileye mensubum.”

### 3 Yarım kalan bir hikaye Hatırladığı tek kelime, soyadı oldu

Metin: Elif Kevser Özer

onu bulduklarında 7-8 yaşlarındaydı, yanında küçük kardeşiyle birlikte. kardeşinin elinden sıkıca tutmuş, çok yürümüş, çok yorulmuşlardı. kim bilir nerelerden geçmişler, neler görmüşler de kabileye sığınmak istemişlerdi.

“adin ne?” diye sordular, “Hagop” dedi. “kaç yaşındasın?” dediler, hatırlamıyordu. “annen, baban nerede?” hatırlamıyordu. “başka kardeşin var mı?” hatırlamıyordu. “ne geldi başınıza, neler oldu?” hatırlamıyordu. “nasıl geldiniz buraya kadar?” hatırlamıyordu. “soyadınız ne?” hatırlamıyordu. “peki, nerden geldiniz buraya?” Talas. tek hatırladığı Talas'tan geldiği. sürgün öncesi hayatından kalan tek miras Talas. Talasyan adını verdiler ona. soyadı Talasyan oldu.

3 The only word he remembered became his surname  
Text: Elif Kevser Özer  
when they found him, he was around seven or eight, he was with his little brother. he was holding on to his brother's hand tightly. they had walked a lot and were extremely tired. who knows what places they had passed, what they had experienced to want to be part of that group going into exile?  
they asked him, “what is your name?” he answered, “Hagop.” they asked “how old are you?” he couldn't remember. “where are your parents?” he couldn't remember. “do you have any other brothers or sisters?” he couldn't remember. “what happened to you?” he couldn't remember. “what is your surname?” he couldn't remember. “where did you come from?” he replied,

“Talas.” the only thing that he remembered was that he came from Talas. the only heritage he had from before the exile was Talas. they named him Talasyan. he was given a new name, as if he was reborn.

it was not that he didn't know, it was that he couldn't remember.

now, his granddaughter bearing the surname Talasyan has never been to Talas. she doesn't want to go. she is afraid of getting hurt by both the things she sees and the things she will never be able to see. since her family story begins with her grandfather, who recalls nothing before joining the exile group, she feels incomplete - as if something is missing from her life. she completes herself with her imagined picture of her family in

«Ինչպե՞ս եք այստեղ հասել»: Չէր հիշում: «Ազգանունդ ի՞նչ է»: Չէր հիշում: «Լավ, որտեղից եք եկել այստեղ»: Թալաս: Միակ բանը, որ հիշում էր՝ Թալասից էին եկել: Տեղահանությանը նախորդած կյանքից մնացած միակ ժառանգությունը Թալասն էր: Թալասյան անունն էին տվել նրան: Թալասյան էր դարձել ազգանունը: Նոր անուն էին տվել նրան, ինչպես նորածնին են տալիս:

Ոչ թե չգիտեր՝ ով է, այլ չէր հիշում:

Թալասյան ազգանունը կրող թոռը երբեք Թալաս չի գնացել: Չի ուզում գնալ: Վախենում է վիրավորվել իր տեսածից, այն ամենից, ինչ չի կարողանալու տեսնել: Ընտանիքի պատմությունը քարավանին միանալուց առաջ ոչինչ չհիշող պապից է սկսվում, այդ պատճառով է թոռն իրեն կիսատ զգում, Թալասի մասին երևակայություններով է իրեն լրացնում: Մտածում է, որ տեղահանությունից առաջ Թալասում մեծ, արմատացած ընտանիք է ունեցել: Հավատում է, որ հարուստ, կրթված խավից են սերում: Պայց միևնույն է՝ հարցնում է.

«Ո՞վ եմ ես» – «չգիտեմ»

«Ի՞նչ ընտանիք ունեի» – «չգիտեմ»

«Ու՞րքե՞ր էին» – «չգիտեմ»

«Ի՞նչ էր նրանց ազգանունը» – «չգիտեմ»

«Ընտանիքիս գլխին ինչե՞ր են եկել» – «չգիտեմ»

ոչ թե չի հիշում, այլ չգիտի:

#### 4 Ուրիշ լինելու հավանականությունը

«Ի՞նչ չեմ կարող լինել», - մտորումներ եզդիական գյուղ այցելելուց հետո

Հեղինակ՝ Գուլսումա Դեմիր

Շամիրամ գյուղի շեյխ Հասան Հասանյան: Մի քիչ ճաղատ, տարեց, գիրուկ ու սիրալիր մարդ: Նայելով նրա գրադարակներին՝ հարցնում եմ՝ արդյո՞ք քրդերեն գրքեր ունի: Առանց պատասխանի սպասելու՝ արագ մոտենում եմ գրադարակին: Բայց չկար: Մի քիչ տխրեցի ու Հասան հորեղբորը մոտեցա: Ձեռքին մի գիրք կար՝ «Kurdên Ezîdî»: Սկսեցի ժպտալ: Ինձ շատ զգուշորեն ասաց, որ իրենց հանկարծ եզդիի չասեմ, որ իրենք էզդիի են: Ես էլ ասացի, որ գիտեմ:

- Դու ո՞վ ես, - հարցրեց նա:

- Գուլե է անունս, քուրդ եմ:

Եվ երկրորդ հարցը.

- Պապդ ո՞վ է եղել:

- Նա էլ էր մարդիկցի, քուրդ էր:

Talas. she imagines that before the exile, they led an expanded family life in Talas. she believes that they were educated and wealthy. nevertheless, she can't help herself, and asks,

"who am I?" -- "I don't know."

"what was my family like?" -- "I don't know."

"what kind of people were they?" -- "I don't know."

"what was their surname?" -- "I don't know."

"what happened to them?" -- "I don't know."

it is not that she doesn't remember, it is that she doesn't know.

4 The possibility of becoming someone else  
"Who I can't be" - contemplations after a visit to a  
Yezidi/Ezidi village

Text and Photos: Gulsuma Demir

The Sheikh of Shamiram village in Armenia, Hesen Hesenyan. A somewhat bold, old, sweet man with a belly. When I saw the books on his bookshelf I asked him whether he owns any books in Kurdish. I went running to the books without waiting for an answer. But I could not find them. I got a bit upset and went to Uncle Hesen. There was a book in his hands: Kurden Ezidi. A smile appeared on my face. He told me, in a very cautious manner, "Do not ever call us Yezidis, we are Ezidis." I told him that I was aware of this.

"Who are you?" he asked me.

yeniden doğmuş gibi, yeniden isim verildi ona.

kim olduğunu bilmiyor değildi, hatırlayamıyordu.

Talasyan soyadini taşıyan torunu Talas'a hiç gitmemiş. gitmek istemiyor. gördüklerinden, göremeyeceklerinden yaralanmaktan korkuyor. hikayesi kafı-  
leye katılmadan öncesini hatırlayamayan dedesi ile başladığı için, kendini eksik  
hissediyor, Talas üzerine tahayyülleriyle kendini tamamlıyor. sürgün öncesi  
Talas'ta büyük, köklü bir ailesi olduğunu düşünüyor. zengin, eğitilmiş kimseler  
olabileceklerine inanıyor. Ama yine de sormadan edemiyor,

“kimim ben?” -- “bilmiyorum.”

“ailem nasıldı?” -- “bilmiyorum.”

“nasıl kimselerdi?” -- “bilmiyorum.”

“soyadları neydi?” -- “bilmiyorum.”

“ne geçti ailemin başından?” -- “bilmiyorum.”

hatırlamıyor değil, bilmiyor.

#### 4 Bir Başkası Olabilme İhtimali bir Ezidi köyüne yapılan ziyaret sonrasında düşünceler

Metin: Gülsüma Demir

Yaşlı, göbekli, kel ve tatlı biri olan Heslen Heslen, Ermenistan'daki  
Shamiram Köyü'nün Şeyhi. Kitaplığında sıralanmış kitapları gördüğümde ona,  
aralarında hiç Kürtçe kitap olup olmadığını sordum ve yanıtını bekleme gereği  
duymaksızın kitaplığa koşup kendim araştırmaya koyuldum. Ne var ki kitaplık-  
ta hiç Kürtçe kitap bulamamıştım. Bunun verdiği rahatsızlıkla Heslen amcanın  
yanına döndüğümde elinde bir kitap tutuyordu: Kurden Ezidi. Yüzümde bir gü-  
lümseme belirdi. Son derece ciddi bir tonlamayla beni uyardı: “Bize sakın Yezidi  
deme, biz Ezidiyiz!” Bunun zaten farkında olduğumu söyledim.

“Sen kimsin?” diye sordu.

“Ben Gule. Kürdüm.”

“Deden kimdi?”

“O da Mardin’li bir Kürttü.”

Ardından bir başka soru geldi: “Peki onun dedesi kimdi?”

Bu soru karşısında derin derin düşündüm ve şunu farkettim ki kendi  
dedemden ötesini hiç bilmiyordum. Bunu daha önce hiç sormamıştım bile. Sahi,  
benim büyük-büyük dedelerim kimdi? İsimlerini bile bilmiyordum. Bu durum  
tuhaf bir sahipsizlik hissi yaratıyordu. Neden bahsettiğimden bile tam olarak  
emin olmaksızın, onların da muhtemelen Kürt olduğunu söyleyerek yanıtladım

“I am Gule, I am Kurdish.”

“Who was your grandfather?”

“He was also from Mardin and also Kurdish.”

And then came another question: “And who was his  
grandfather?”

I thought and thought and realized that I had never  
gone beyond my grandfathers before and had never questioned  
it. Who were my great-grandfathers? I do not even know their  
names. It is a strange feeling of unbelongingness. Without being  
very sure of what I was saying I told him that they were probably  
Kurdish too. Of course a lot of questions are wandering in my  
head. And there was another question:

“And who was your great-grandfather's grandfather?”

Wow, where did this question come from?

I do not remember a single time that any of my  
great-grandfather's grandfathers had ever been mentioned. How  
old was I anyway? How many generations can a person recall?  
One, two, three. I could not go beyond three. I come eye to eye  
with Uncle Heslen. He is expecting an answer to his question.

I say, “I don't know.”

Unexpectedly, he becomes happy, as if this was the  
answer he had been waiting for.

“Okay, so you are Ezidi,” he says.

We leave the house. I need to ask and learn something.  
Who am I? Who can I be? And who can't I be?

Եվ ևս մի հարց.

- Իսկ նրա պապն ո՞վ է եղել:

Մտածում եմ և հասկանում՝ նախկինում պապիցս այն կողմ ոչ մեկի մասին չեմ իմացել: Ո՞վ էր պապիս պապը: Անունն անգամ չգիտեմ: Անտերության տարօրինակ զգացողություն ունեցա: Ինքնավստահ ասում եմ.

- Երևի նա էլ էր քուրդ:

Իհարկե, գլխումս մի շարք հարցականներ են առաջանում: Եվ ևս մի հարց.

- Լավ, իսկ նրա պապն ո՞վ էր:

Այ քեզ բան, սա ի՞նչ հարց էր: Չեմ հիշում, որ որևէ անգամ պապիս պապի պապի մասին խոսեինք: Բացի այդ՝ քանի՞ տարեկան եմ: Քանի՞ սերունդ կարող է հիշել մարդը: Մեկ, երկու, երեք: Ես երեքից այն կողմ չկարողացա անցնել: Հասան հորեղբոր ու իմ հայացքները իրար են հանդիպում: Հարցի պատասխանին է սպասում:

- Չգիտեմ, - ասում եմ ես:

Հանկարծ ուրախանում է, կարծես դա էր իր փնտրած պատասխանը:

- Լավ, - ասում է, - ուրեմն դու էգիդի ես:

Տնից դուրս ենք գալիս: Պետք է գնամ, հարցնեմ ու իմանամ: Ո՞վ եմ ես, ո՞վ կարող եմ լինել և ով չեմ կարող:

## 5 Քույրերից՝ անծանոթներ, անծանոթներից՝ քույրեր Ինչպես մայրը կորցրեց իր երեք դուստրերին

Տեքստը և լուսանկարները Լիլիթ Հակոբյանի



Fotoğraftakiler: (Soldan sağa) Manya – en büyük kardeş; Arevhat: en küçük kardeş. Kardeşlerin arkasında ayakta duran ise en küçük kardeşin kızı.

Չախից աջ. Մանյան մեծ քույրը, Արևհատը, փոքր քույրը:

Նրանց հետևում փոքր քրոջ աղջիկն է:

From left to right: Manya – the eldest sister, Arevhat, the youngest sister, behind them the daughter of the youngest sister.

Երագիկի մայրը՝ Արևհատ Հարությունյանը, ապրում էր Նախիջևանում (այժմյան Նախիջևանի Ինքնավար Հնարապետությունը Ադրբեջանի կազմում) իր ընտանիքի՝ հոր, խորթ մոր (նրա մայրը լավաշ թխելիս ընկել էր թոնիրը և մահացել), երկու քույրերի և եղբոր հետ: Ըստ ընտանեկան փաստաթղթերի՝ Արևհատը ծնվել է 1908-ին, բայց երբեք չի իմացել ծննդյան ճշգրիտ թիվը: Հետագայում, երբ նա Ալեքսանդրապոլի (Գյումրու) որբանոցում է հայտնվում, բժիշկները երեխաների տարիքը որոշելու համար հաշվել են ատամները և չափել հասակը, քանի որ ցեղասպանության թոհուրոհից ցնցված մանկահասակ որբերը չէին հիշում իրենց ծննդյան թվերը:

Արևհատի հայրը մեծ խաղողի այգի է ունեցել և գինի սարքել: Մի օր, երբ հայրը այգում գինի պատրաստելիս է եղել, թուրք զինվորները խուժել են տուն և սպանել նրան: Նրա կինը չորս երեխաների հետ (որոնցից միայն տղան է եղել իրենը,

5 From sisters into strangers,  
from strangers into sisters  
How a mother became separated from her three  
daughters

Text and photo: Lilit Hakopyan

Yerazik's mother Arevhat Harutyunyan was living in Nakhijevan (currently the Nakhichivan Autonomous Republic within the Republic of Azerbaijan) with her family: her father, stepmother (her mother burned in tonir when she was making lavash - a kind of bread), two sisters and a brother. According to the family documents, Arevhat was born in 1908, but she never knew the exact date of her birthday. Later when she was in Alexandrapol's (Gyumri) orphanage, doctors counted children's

soruyu. Ama hiç kuşku yok ki kafamda pek çok soru vardı. Derken yeni bir soru daha geldi:

“Peki büyük-büyük dedenin büyük dedesi kimdi?”

Hay aksi, bu soruda nereden çıkmıştı şimdi?

Daha önce büyük-büyük dedemin büyük dedesinden bir tek kez bahsedildiğine bile tanık olmamıştım. Kaldi ki ben daha kaç yaşındaydım ki. Bir insan geçmişe dönüp kaç kuşağı bilebilirdi ki. Bir mi, iki mi, üç mü? O kadar eskiyi bilmem de beklenemezdi ya. Hesen amca ile göz göze geldim. Sorusunu yanıtlamamı beklediği açıktı.

“Bilmiyorum” dedim.

Şaşılacak biçimde mutlu etmişti bu yanıt onu. Sanki duymayı beklediği yanıt tam da buymuş gibiydi.

“Tamam. O halde sen Ezidisin” dedi.

Evden ayrıldık. Sormam ve öğrenmem gereken pek çok soru var artık. Sahiden ben kimim? Kim olabilirim? Kim olamam?

## 5 Kardeşleşen Yabancılar Yabancılaşan Kardeşler Bir anne, üç kızından nasıl ayrı kaldı

Metin: Lilit Hakopyan

Yerazik’in büyük annesi Arevhat Harutyunyan, babası, üvey annesi, iki kız ve bir erkek kardeşi ile birlikte (günümüzde Azerbaycan sınırları içinde bir özerk cumhuriyet olan) Nahçıvan’da yaşıyordu. Öz annesi, lavaş ekmeği yaparken tandıra düşüp yanmıştı. Kayıtlara bakılacak olursa Arevhat, 1908 yılında doğmuştu. Ancak gerçek doğum tarihini hiç bir zaman bilemedi. Daha sonra Alexandrapol (Gümrü) yetimhanesine geldiğinde, kaç yaşında olduğunu bile söyleyemeyecek; onun durumundaki çocukların yaşları, diş sayılarına ve boy ölçülerine bakılarak doktorlar tarafından tespit edilecekti.

Arevhat’in babasının büyük bir üzüm bağı vardı ve şarap üretiyordu.

Bir gün babası yine bahçede şarap yaparken Türk askerler bölgeyi işgal etmiş ve babasını oracıkta öldürmüştü<sup>1</sup>. Karısı, dört çocuğunu da alarak evden kaçmıştı. (Bu çocuklardan sadece erkek olanı kendi öz çocuğuydu. Diğer üçü, kocasının ilk eşinden olan çocuklardı.) Yolda atlı bir Ermeni’ye rastladılar. Arevhat’in üvey annesi, o sırada 13-14 yaşında olan en büyük kızı Manya’yi evlenmek üzere bu adama verdi ve üç çocuğu ile birlikte Alexandrapol’e doğru yeniden yola koyuldu. Ancak Alexandrapol’e vardıklarında da, üç çocukla birlikte yaşamalarını sürdürmelerinin önüne pek çok zorluk çıktı. En nihayetinde iki kız

teeth and measured their height to determine their age, as they were too young and traumatized by the Genocide to remember their birthdays.

Arevhat’s father used to have a large vineyard and make wine. One day, when her father was making wine in his garden, Turkish soldiers invaded the place and eventually killed him<sup>1</sup>. His wife ran away from home with four children (only the son was her own child, the three daughters were from her husband’s first wife). On their way they met an Armenian horseman. Arevhat’s stepmother gave her eldest daughter Manya, who was only 13 or 14 years old, into marriage to him. She continued to Alexandrapol with three children. When she got to Alexandrapol, she faced many challenges to sustain her other three kids. She had to send

the two daughters to an orphanage. The son stayed with her, but he eventually died of starvation.

Arevhat and her young sister grew up in an orphanage. Here she met her future husband Antranik Hakopyan, who hailed from Moush, Boulangh. Yerazik recalls that her father Antranik used to show her the long distance he walked from Boulangh to Alexandrapol on the map. Yerazik remembers that both of them - her father and mother - had warm memories of the orphanage. There were about 20,000 orphans in Alexandrapol province at that time. They had lost their parents, siblings and relatives on the way, but they found thousands of sisters and brothers in the orphanage. Yerazik remembers that for many years she used to call her father’s friend uncle, and had no doubt that he was

մնացած երեքն ամուսնու առաջին կնոջից էին) փախել է տնից: Ճանապարհին հանդիպել են մի հայ ձիավորի, որին Արևհատի խորթ մայրը կնության է տվել իր ամենամեծ աղջկան՝ Մանյային, որն այդ ժամանակ ընդամենը 13-14 տարեկան էր: Նա երեք երեխաների հետ շարունակել է ճամփան մինչև Ալեքսանդրապոլ: Երբ հասել է Ալեքսանդրապոլ, շատ զրկանքներ է կրել իր երեք երեխաներին պահելու համար: Նա ստիպված է եղել երկու աղջիկներին որբանոց ուղարկել: Տղան մնացել է իր հետ, բայց ի վերջո մահացել է սովից:

Արևհատը և նրա փոքր քույրը մեծացել են մանկատանը: Այստեղ Արևհատը հանդիպել է ապագա ամուսնուն՝ Անդրանիկ Հակոբյանին, որը Մշո Բուլանդից էր: Երագիկը հիշում է, որ հայրը՝ Անդրանիկը, հաճախ քարտեզի վրա ցույց էր տալիս այն երկար ճանապարհը, որ քայլել-անցել էր Բուլանդից մինչև Ալեքսանդրապոլ: Երագիկը պատմում է, որ նա մայրը, նաև հայրը մանկատանից ջերմ հիշողություններ ունեին: Ալեքսանդրապոլի գավառում այդ ժամանակ մոտավորապես 20,000 որբ կար: Նրանք ճանապարհին կորցրել էին իրենց ծնողներին, քույրերին ու եղբայրներին, հարազատներին, բայց հազարավոր քույրեր և եղբայրներ գտան մանկատանը: Երագիկը հիշում է, որ տարիներ շարունակ հոր ընկերոջը «հորեղբայր է» ասել, և կասկած չի ունեցել, որ նա, իրոք, հարազատ է, այլ ոչ թե հոր ընկերը:

1950-ականներին երկու որբ քույրերը գտել են իրենց մեծ քրոջը, ով ամուսնացել էր գաղթի ճանապարհին:

Այս լուսանկարն արվել է կանանց վերամիավորումից հետո: Անգամ նկարում տեսանելի է քույրերի միջև եղած «անդունդը»․ միասին մեծացած քույրերը նստած են կողք կողքի: Հայոց ցեղասպանությունը անձանտներին դարձրեց քույրեր, իսկ քույրերին՝ անձանտներ:

1 Թուրքական բանակը ներխուժել է Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում գտնվող Նախիջևան 1918 և 1920 թթ.

## 6 Գևորգյանների ընտանեկան պատմությունը Նրանք կորցրին ամեն ինչ, բայց բախտավորվեցին իրար գտնելով

Հեղինակ Ալիսա Ավագյան

Տիգրան Գևորգյանի ու Անիկ Գրիգորյանի ողբերգության ու վերապրումի պատմությունները կենդանի հիշողություն են դարձել Գևորգյան ընտանիքում: Ընտանիքի հարսը՝ Նունուֆար Գևորգյանը, մեզ պատմեց, որ սկեսուրն ու սկեսրայրը ծագումով Խնուսից և Կարսից են: «Հորական կողմն էլ է Խնուսից, նրանք նույնպես գաղթականներ են եղել», – ասում է նա, բայց և ընդունում, որ հորական տանն այս պատմություններն այնքան հաճախ չէին պատմում, որքան իր ամուսնու ընտանիքում:

Տիգրան Գևորգյանը ծնվել է 1909 թվականին: Նրա հայրը՝ Խողեղան,

indeed a relative and not just a friend of her dad.

In the 1950s, the two orphan sisters found their eldest sister, who had been married off on the way.

This photo is taken after the reunion of these ladies. You can see that even in the photo the gap between the lost sisters is visible: the sisters who grew up together are sitting closer than the “lost” one. The Armenian Genocide turned strangers into sisters and sisters into strangers.

1 The Turkish army invaded Nakhijevan, then part of the First Armenian Republic, in 1918 and 1920

6 The family story of the Gevorgyans  
They lost everybody but were lucky to find one another  
Text: Alicia Avagyan

The stories of the tragedy and survival of Tigran Gevorgyan and Anik Grigoryan have become living memories in the Gevorgyan family. Nunufar Gevorgyan, the bride of the family, told us that her in-laws hail from Khnus and Kars. “My father’s side also comes from Kars, they were refugees as well,” she said, though she admitted that in her father’s house these stories were not as commonly told as those in her husband’s family.

Tigran Gevorgyan was born in 1909. His father Khodeda was a craftsman, a blacksmith “a hardworking, smart person”. He was murdered in his own house in Khnus in 1915. The mother hid

çocuğunu bir yetimhaneye yerleştirmek zorunda kaldı. Sadece oğlu kendisiyle kalmıştı. O da bir süre sonra açlıktan ölecekti.

Arevhat ve küçük kız kardeşi yetimhanede büyüdüler. Burada, gelecekte evleneceği adam olan Antranik Hakopyan ile tanıştı. Antranik, Muş'un Bulanik ilçesindedi. Yerazik, babası Antranik'in Bulanik'tan Alexandrapol'e kadar yürüyerek aştıkları o uzun yolu harita üzerinde kendisine gösterdiğini animsiyor. Yerazik, annesinin de babasının da yetimhaneye dair sevgi dolu hatıraları olduğunu da hatırlıyor. O yıllarda Alexandrapol bölgesi yetimhanelerinde 20.000 dolayında yetim çocuk kalıyordu. Ailelerini, kardeşlerini, akrabalarını yolda kaybetmiş, ama yetimhanede binlerce kız ve erkek kardeş bulmuşlardı. Yerazik uzun yıllar boyunca babasının arkadaşına amca diye seslendiğini hatırlıyor. Onun gerçekte akrabaları olmadığı, sadece babasının bir arkadaşı olduğu konusunda da hiç bir şüphesi yok.

1950'li yıllarda iki yetim kardeş, yolda kaybettikleri büyük ablalarını bulmuşlar.

Bu fotoğraf, işte bu kadınların yeniden buluşmalarının hemen akabinde çekilmiş. Kayıp kızkardeş ile aralarında oluşan mesafe, fotoğrafta bile görülebiliyor. Birlikte büyümüş olan iki kardeş yanyana otururken, "kayıp" ablalaları bir parka daha mesafeli oturmuş. Ermeni soykırımı, yabancıları kardeşleştirirken, kardeşleri de yabancılaştırmış.

1 Osmanlı ordusu, o zamanlar Birinci Ermeni Cumhuriyeti toprağı olan Nahçıvan'ı 1918-1920 tarihleri arasında işgal etti.

## 6 Gevorgyanların aile hatıratı Herkesi kaybettiler ama birbirlerini bulmanın mutluluğunu yaşadılar

Metin: Alisa Avagyan

Gevorgyan aile hatıratında, Tigran Gevorgyan ve Anik Gevorgyan'ın trajedisi ve hayatta kalması hikayeleri hala yaşıyor. Ailenin gelini Nunufar Gevorgyan, bize kayınpederle kaynananın Hınıs (Khnus) ve Kars kökenli olduklarını anlatıyor. "Benim de baba tarafım Kars'lidir, onlar da kaçıp gelmişler" diyor, ama babasının evinde bu hikayelerin eşinin evinde olduğu kadar çok anlatılmadıklarını da teslim ediyor.

Tigran Gevorgyan 1909'da doğmuş. Babası Khodeda zanaatkarmış, "ağır çalışan, zeki" bir demirci. 195 yılında Hınıs'ta, kendi evinde öldürülmüş. Anne, Tigran ve kardeşi Migirdiç'i arka bahçedeki samanlıkta saklamış. "Anneleri Naze'yi son kez samanlığın içinden görmüşler, Türkler onu götürdüğünde."

Evlerine giren grup arasında Türk komşuları Hasan da varmış. Hasan, kadının götürülürken samanlığa baktığını fark etmiş. Bir süre sonra Hasan, ço-

Tigran and his brother Mkrtych in hay stored in their backyard. "The last time they saw their mother Naze was from inside the hay, as she was being carried away by the Turks."

Among the mob that invaded the house was their Turkish neighbour Hasan, who noticed that the woman was staring at the hay while she was being dragged away. After a while Hasan returned to the house, thinking that the children might have been hidden there. He got them out and took them to his house, ordering them not to reveal their presence in any way until a refugee caravan passed by and they could join it.

Hasan kept his promise and put the brothers into a group of Armenians that were passing through the area. Despite the brutalities and hardships of the escape, the siblings managed

to reach Etchmiadzin, where they stayed with the other refugees. A few days later Tigran woke up to find that his brother was gone. He later learned that Mkrtych had been taken to the US. From that day on Tigran neither saw nor heard from his brother again. The orphaned boy lived through his childhood and adolescence in Etchmiadzin, in a place known as the bazaar, a gathering place for refugees. There he met his future wife Anik, herself a refugee, who had lived through a similar tragedy.

Anik's family was from Karin. Her father Baghdasar was killed at the very beginning of the massacres. Then the population of five villages was gathered and brought to a place called Kormar, which was populated by Kurds. The four-year-old Anik was with her mother and brother Nshan. Once they had been

արհեստավոր էր, դարբին. «աշխատող, խելոք մարդ էր»: 1915-ին նրան սպանում են իր տանը՝ Խնուսում: Մայրը թաքցնում է Տիգրանին ու եղբորը՝ Մկրտչին, ետնաբակի խոտի դեզի մեջ: «Վերջին անգամ նրանք տեսան իրենց մորը՝ Նազելին, դեզի միջից, երբ նրան տանում էին թուրքերը»:

Տուն ներխուժածների հետ է լինում նաև թուրք հարևան Հասանը, որը նկատում է, որ կինը ուշադիր նայում է դեզին, երբ իրեն քարշ տալով հեռացնում են: Քիչ հետո Հասանը միայնակ վերադառնում է տուն՝ մտածելով, որ երեխաները խոտի դեզի մեջ թաքնված կլինեն: Նա հանում է նրանց ու տանում իր տուն, պահում հրամայելով ոչ մի ձևով չմատնել իրենց ներկայությունը, մինչև գաղթականներ կանցնեն, և եղբայրները կմիանան նրանց խմբերից մեկին:

Հասանը պահում է խոստումը և եղբայրներին տալիս այդ կողմերով անցնող հայերի մի խմբի: Չնայած գաղթի դաժանություններին և զրկանքներին, եղբայրները կարողանում են հասնել Էջմիածին, որտեղ մնում են այլ գաղթականների հետ: Մի քանի օր անց Տիգրանն արթնանում է ու տեսնում, որ եղբայրը չկա: Հետո իմանում է, որ Մկրտչին տարել են ԱՄՆ: Այդ օրվանից Տիգրանը ոչ տեսնում է եղբորը, ոչ էլ նրանից որևէ լուր ստանում: Որք մնացած տղայի մասնկությունն ու պատանեկությունն անցնում է Էջմիածնում՝ «բազար» կոչվող վայրում, որը գաղթականների հավաքատեղի էր: Այնտեղ նա հանդիպում է ապագա կնոջը՝ Անիկին, որը նույնպես գաղթական էր և անցել էր նույնանման ողբերգության միջով:

Անիկի ընտանիքը Կարինից էր: Հայրը՝ Բաղդասարը, սպանվել էր ջարդերի ամենասկզբում: Շրջակա հինգ գյուղերի բնակչությանը հավաքել էին ու տարել քրդերով բնակեցված Քորմար վայրը: Չորսամյա Անիկը լինում է մոր և եղբոր՝ Նշանի հետ: Հենց հավաքատեղի են հասնում, «թուրքերը տղամարդկանց առանձնացնում են և փող ուզում, որ իբր թե ապահով հասցնեն նրանց արքայավայր»: Ահագին մեծ փրկագին են հավաքում և տալիս թուրքերին, բայց զինվորները սկսում են խոսել քրդերի հետ, փախալ նրանց ականջներին և կրակ բացում տղամարդկանց վրա:

Այդ ժամանակ Անիկը լինում է մոր՝ Ռեհանի գրկում: Կրակոցների տարափի տակ յուրաքանչյուրը նետվում է փրկվելու և ապահով տեղ գտնելու իր, իր երեխաների ու ընտանիքի համար: Այդ պահին Անիկի մայրը երեխային գրկից բաց է թողնում, և նրանք բաժանվում են պատուհասած սարսափի ու խառնաշփոթի մեջ: Անիկին և եղբորը վերցնում է մի կին, ու նրանք գաղթականների խմբի հետ ճանապարհ են ընկնում դեպի Ռուսահայաստան: Ճանապարհին, սակայն, յոթնամյա Նշանը, չդիմանալով սովին և զրկանքներին, մահանում է, իսկ Անիկը հայտնվում է Էջմիածնում լրիվ միայնակ:

Տարիներ անց հասուն տարիքում նա գնում է Էջմիածնի գերեզմանոց, որն անտառների կողմում էր ու մի գերեզմանաքարի վրա լաց լինում «մամա ջան, սիրելի մամա ...»: Մի անգամ նրան մի մարդ է մոտենում և ասում. «Սա տղամարդու գերեզման է, քո մաման այստեղ չի թաղված»: Անիկը պատասխանում է. «Իմ մամայի գերեզմանը որտեղ գտնեմ, ինչի վրա լաց լինեմ: Ես լաց կլինեմ այս գերեզմանի վրա, իսկ եթե մայրս ինչ-որ տեղ գերեզման ունի, գուցե մի ուրիշն էլ նրա գերեզմանի վրա լացի»:

gathered together, "the Turks separated the men and asked for money to deliver them safely into exile. A substantial ransom was collected and handed over, but then the soldiers started to talk to the Kurds, whispered into their ears and then opened fire at the men." At that moment Anik was in her mother's arms, but under the hail of gunfire everyone threw themselves to safety - everyone sought a safe place for themselves, their kids and their family. At some point Anik's mother lost her child from her grip and they were separated amidst the terror and chaos. Anik and her brother got picked up by another woman and together with a crowd of refugees they set out for Russian Armenia. But seven-year-old Nshan died of starvation on the road, and Anik found herself in Etchmiadzin all alone.

Years later, as an adult, she used to go to the Etchmiadzin cemetery which was close to a forest, and cry by a gravestone: "Mother, my dear mother..." Once a man approached her and said, "This is a man's grave, your mother is not buried here." Anik answered, "Where can I find my mother's grave, where can I cry? I will cry by this grave and if my mother has a grave somewhere maybe someone will cry by her grave too."

cukların burada sakli olabileceklerini düşünerek dönmüş eve. Çocukları oradan çıkarmış ve kendi evine götürmüş, ve onlara, katilabilecekleri bir mülteci kervani geçmedikçe kesinlikle burada olduklarını belli etmemelerini tembihlemiştir.

Hasan sözünü tutmuş, bir grup Ermeni o yöreden geçtiğinde kardeşleri onlara teslim etmiş. Bu kaçışın tüm vahşiliklerine ve zorluklarına inat kardeşler hayatta kalabilmiş ve Eçmiatsin'e ulaşabilmiş, orada diğer mültecilerle kalmışlar.

